

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




9(47-925)9
7-89

20 NOV 2011

5 OCT 2011

9(47.825)Q
17-89



Նույր Համազգայինի
Սելանքըն և Հայկ Արսանեան
Շնորհանդեն - Լիբանան

ԴՐՈ

ԸՆԿԵՐ ԴՐՈ

(ԴՐԱ.ՍՏԱ.ՄԱՏ ԿԱՆԱՅԵԱՆ)

— 1884-1956 —

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

ԴՐԱ.ՍՏԱ.ՄԱՏ ԿԱՆԱՅԵԱՆ, որ մեր ազատագրական շարժման եւ Հայաստանի Անկախ Հանրապետութեան մէջ իր պատուա որ տեղն է գրաւած ԴՐՈ անունով, ծնած է Արարատեան դաշտի Սուրմալու գաւառի Խզդիր աւանին մէջ, 1884 թուին:

Բարեկեցիկ ընտանիքի զաւակ, Ընկեր Դրոն ուղարկուած է Երեւան, կրօւբիւն ստանալու ուստական գիմնազիայի մէջ: Գիմնազիայի լրիւ դասրներացքը չաւարտած, 1904ին մտած է զինուորական ծառայութեան մէջ, պատրաստուելու համար իբրև ոռու բանակի սպայ: Սակայն հայ ժողովուրդի ալեծուփ կենանքը բռլլ չէ տուած Դրոյին լրացնելու իր զինուորական կրօւբիւը: 1905 Փետրուար ամսու սկիզբը, Բագուի զինուորական նահանգապետ Նակաշիձեն բարաներու ձեռքով կազմակերպեց հայերու կոտորածը Բագուի մէջ, Երբ այդ կոտորածի լուրը կը հասնի Հիւսիսային Կովկասի Պետական գորսկ հաղաքը, ուր զինուորական ծառայութեան մէջ եր ընկեր Դրո, հանի մը օրով արձակուրդ կը ստանայ եւ կը մեկնի բանակեն, այլեւս երբեք չվերադառնալու համար: Ընկ. Դրո կ'երբայ Բագու: Նակաշիձեի կազմակերպած հայասպան ոճիրը չէր կրնար անպատճ մնալ: Եւ Բագուի կոտորածեն երկու ամիս չանցած, 1905 Մայիսին, Նակաշիձեն կ'իյնայ հայու վրիժառու բազկի հարուածեն: Այդ բազուկը 20 տարեկան Դրոն էր:



5690-2010

Բագուն եղաւ վտանգի ահազանգը, որ սիփաց կազմակերպել հայկական ինքնապատճենութիւնը: Հայ-բարերական բախումները ստացան կանօնաւոր պատերազմի կերպարաններ: 1905ին եւ 1906ին ընկեր Գրո մասնակցած է հայկական ինքնապատճենութեան կոիւներուն: Նիկոլ Դումանին եւ Քեռիի հրամանին տակ:

1908ի վերջը ցարական կառավարութիւնը ձեռնարկեց դաշ-
նակցականներու ծանօթ զանգուածային ձերբակալութեան: Ամենէն
կատաղի կերպով հետապնդուածներէն մէկը Գրու էր: Թուրքիա սահ-
մանադրութիւն հոչակած էր եւ Գրո անցաւ Թրքահայաստան եւ հաս-
տատուեցաւ հին Բայազէկ, որ մօսաւորապէս 35—40 մղոն միայն հե-
ռու էր Գրոյի հայրենի Խզդիր աւանեն:

Համաշխարհային Առաջին պատերազմը արդեն սկսած էր, քեւ Թուրքիան կողուի մեջ չեր մտած, բայց բոլոր նախներեն կ'երեւար, որ Թուրքիոյ մասնակցութիւնը պատերազմին՝ ժամանակի խնդիր էր միայն: Կովկասի ուսուական բանակի սպայակոյտը պատրաստութիւններ կը տեսներ յանկարծակի չգալու, թրեական յարձակման պարագային: Սպայակոյտը հայ կամաւորական գնդերու պատրաստութեան ծրագիր ալ ուներ: Այդ օրերուն էր, որ Դրոն բուրքերու կողմէ ձեռքակալութենին խուսափելու համար կ'անցներ Կովկաս, ուր հայոց Ազգային բիւրոն ձեռնարկած էր հայկական կամաւորական գունդերու կազմութեան: Դրոն կը ստանձնէ կամաւորական Բ. Գունդի հրամանաւորութիւնը: Ռուս-թրքական պատերազմը սկսելուն պէս Դրոյի գունդը կ'անցնի սահմանը եւ կ'արւակ Աբաղա-Քերկրի-Վան ուղղութեամբ: Բայց առաջին իսկ մեծ կորիխն, ծանր կերպով կը ուղղութեամբ: Գրեք մահմաներ վիճակի մեջ ուղղագույն նախ վիրաւորուի: Գրեք մահմաներ վիճակի մեջ ուղղագույն նախ նգդիր, ապա Թիֆլիս կը փոխադրուի, ուր, տնօրինի բժշկական

խնամքի, երկու ամիսեն ոտքի կ'ելլէ: Ողնայարի մօսերը մտած գնդակը մնաց Դրոյի բօքերուն մէջ:

1915 Մարտին Դր կրկին իր գնդին զլուխն անցած, Քեռիի
եւ Համազասպի գունդերուն հետ, իբրև յառաջապահ ոռուսկան
բանակի, կ'արօսւէ դեպի Վան: Թրքական պաշարումնեն ազատած
Վան մտնից առաջին գունդը եղած է Դրոյի ձիաւոր հարիւրեակը,
Խեցոյի զլիսաւորութեամբ:

Այնուհետև մեր միւս չորս կամաւորական գունդերուն հետ մասնակցած է բազմաթիւ կոիւներու, մինչեւ 1916ի առունը, երբ Կովկասեան ճակատի հրամանատար հայատեաց մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայենից ցրուեց հայ կամաւորական գունդերը:

1918-ին, երբ բայց եւ կի կներու դրդումով ուստի բանակը լինց ուսւ-թքական ճակատը, հայկական նորակազմ ուժերու մէկ մասի գլուխն անցած՝ Դրօ պատճառեց Արարատան Դաշտի ճակատը։ Այդ ճակատին վրայ թռւթերը երթեց չկրցան յաշտղութիւն ունենալ։

1918ի մայիսեան ճակատագրական կոփիւներու ժանանակ ընկեր Դրո վարեց Բաք-Աբարանի յաղթական ճակատամարտը:

Նոյն տարբաւն Դեկտեմբեր ամսուն, Վրաստանի կառավարութեան թշնամական վերաբերումը Հայաստանի հանդեպ պատճառ եղաւ, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ պատերազմ սկսի: Իրեւ Դիլիջան-Լոռի գօրամասի հրամանաւար, Դրո դեկավարեց հայկական ուժերը հայ-Վրացական պատերազմին մէջ: Հայկական բանակը Դրոյի հրամանին տակ դուրս էց Վրացական գօրեւը Հայիական Ոռ իւն:

Հայաստանի Հանրապետութեան շրջանին Դր վարեց Հայաստանի ռազմական նախարարի օգնականի պատուի: Պատուին բերումով իր վրայ էր դրաւած Հայաստանի մայրաքաղաքի պատութեան հոգը:

1920-ին, երբ տեղի ունեցաւ սովետական միացեալ յարձակումը Հայաստանի վրայ, դարձեալ բնկեր Դրոյին վիճակունեցաւ պատճենել Արարատի գաջի ճակատը քուրքերուն դեմ: Եւ դարձեալ, ինչպէս 1918-ին, ամէն տեղ այդ ճակատին վրայ թշնամին հանդիպեցաւ Դրոյի ղեկավարած արի զօրամասերուն, որոնի երբեք չընկրկեցան:

Նոյեմբերին, անյաջող պատերազմի հետեւանելով, տեղի ու-
նեցաւ Հայաստանի կառավարութեան փոփոխութիւն եւ նոր կա-

ռավարութեան մէջ Դրոն ստանձնեց զինուորական նախարարի պաշտօնը: Որպէս կառավարութեան ներկայացուցիչ, ան Համբարձում Տէրտէրեանի հետ վարեց բանակցութիւններ Մոսկուայի ներկայացուցիչ Լեզրանի հետ եւ Դեկտ. 2ին ստորագրուած համաձայնագրով Երկրի իշխանութիւնը փոխանցուեցաւ Սովիետներուն: Խորհրդային նորակազմ կառավարութեան մէջ պէտք է մտնէին ընկերներ Դրո եւ Համբարձում Տէրտէրեան: Երբ բոլոր իշխանները Երեւանի մէջ հաստատուեցան, ընկեր Դրոն տարին Մոսկուա, իբրև ախորական: Երկու տարիի չափ Դրոն մնաց Մոսկուա, ապա անցաւ Արտասահման:

Համաշխարհային Երկրորդ պատերազմի ընթացքին գերման բանակին կողմէ գրաւուած Երկիրներուն մէջ հայութեան պահանջութիւնը եղաւ Դրոյի մէծ ծառայութիւններէն մէկը հայ ժողովուրդին:

1948-ին ընկեր Դրո հաստատուեցաւ Լիբանան եւ իր կեանքի վերջին տարիները անցուց Մերձաւոր Արեւելքի հայաւատ զաղութեան մէջ:

1955-ի Դեկտեմբեր 6-ին մեկնեցաւ Միացեալ Նահանգներ, ուր 1950-ին ի վեր հաստատուած էր իր ընտանիքը եւ հոն ալ փակեց իր աշխերը 1956-ի Մարտ 8-ին:



Ս. ՎՐԱՑԵԱՆ

«ԱՌԱՋԻՆ ԶԵՆՔ ԲԱՆԵՑՑՆԵԼԸ»

Անդին մարտական ևուզեռի մէջ էր ըմբռոստ Ստանուը, ուր համախմբուում էին զինամթերք և հայդուկային ուժեր՝ քաջ Անդրանիկի հրամանատարութեան ներքեւ: Այս կողմ, 1903 թ. Յունիս 12ին, հրամարակուել էր ցարական հրամանագիրը հայագային-եկեղեցական կալուածների գրաւման մասին: Դաշնակցութեան զեկավարութեամբ հայութիւնը ոտքի էր ենուում ընդդէմ ցարիզմի: Բարձրանուում և տարածուում էր ժողովրդական ցոյցերի և ըմբռոստութիւնների ալիքը: Հ. Յ. Դաշնակցութեան նախաձեռնութեամբ կեանքի էր կոչուում ինքնապաշտպանութեան կողրոնական կոմիտէն, որ հրապարակային ազդով սպառնուում էր կառավարական պաշտօնեաններին ու դաւաճաններին, եթէ նրանք աջակցեն կառավարութեան բռնագրաւելու հայկական գոյքնը: Կազմակերպուում էին ահաբեկչական խմբեր պատմելու համար յանցաւորներին: Իրար յետեւից, տեղի էին ունենուում յանդուգն ահաբեկումներ և միշտ ահաբեկիչը ազատ էր»...

Դրոն, որին Աստուած ստեղծել էր յեղափոխութեան և ուզմի համար, կարող էր հանդիսա մնալ տեղը կամ զինուորական գպրոցի մասին մտածել: Նա ամբողջ կութեամբ նետուում է կոռու ասպարէզ, մտնուում է ահաբեկիչների խմբի մէջ, մասնակցուում է ժողովրդական ցոյցերի կառավարութեան դէմ, մի քանի անդամ ծեծւում է ժանտարմների կողմից:

— Մայրս, պատմուում էր նա խնդալով, օրհնուում էր ցարին. «Օքհնեալ լինի նիկոլայի թախար, աղէս որ ժամ ոտը չէր դընուում, հիմի ժամի համար ծեծ է ուտուում...»:

Խնդիրը միայն ծեծով ու ցոյցով չի վերջանուում: Դաշնակցութիւնը անիմայ կուր էր յայտարարել լրտեսների, մատ-

նիշների ու դաւաճանների դէմ: Գաւառապետ հայտկեր Բոգուս-
լաւսկիի ձեռքին կոյր գործիք էր դարձել թէձէրապատ գիւղի
տանուտէր Մարտիրոսը: Դրոյին վիճակուեց նրա հաշիւը տես-
նելու, և այդ եղաւ դրոյի առաջին մարտական գործը կամ,
ինչպէս ինքն էր առում, «առաջին զէնք բանեցնելը»: Ուզում
եմ իր խօսքերով ներկայացնել այդ գէպքը, որպէս սկսում է
Դրոյի գիւցազնական մարտական ասպարէզը:

Մի երեկոյ, 1953 թ. Հոկտեմբեր 15ին, երբ, ըստ սովո-
րութեան, միասին նստած տանը վերյիշումներ էինք անում անց-
եալից, Դրոն դարձաւ ինձ, թէ, —

— Գիտե՞ս ինչ, այսօր իմ զէնք բանեցնելու յիսնամեակն է:
եւ իմ պնդումի վրայ պատմեց: Վերջը ևս պատմածը գրի
առի.

— «1903 թուի ամառուանից մեծ թափ առաւ զէնքի փոխադ-
րութիւնը գէպի Տաճկահայաստան: Գաւառապետ գազան Բոգուս-
լաւսկին խիստ հետապնդում էր հայ յեղափոխականներին: Թէձէ-
րապատ գիւղին դաւաճան Գալաւա (գիւղապետ) Մարտիրոսը օդ-
նում էր սատիկանութեան: Որոշուեց խիել և գործը յանձնուեց
ինձ, մեր շրջանի յանդուգն ու նույիրուած Դաշնակցական Գէոր-
գանի և ուրիշ մի ընկերոջ հետ միասին:

«Մեր տանը ապրում էր Սաշա Զաբոլոտկօ անունով մի
սպայ, որի մօտ ևս ռուսներէն դասեր էի առնում: Մեղ մակրիմ
մարդ էր: Նրա մօտ յաճախ հաւաքւում էին իր սպայ ընկերները
և ուրախ ժամանակ էին անցնում: Այդ երեկոյ էլ, Հոկտեմ-
բեր 15ին հիւրեր եկան: Սաշան խնդրեց ինձ, ձի նստեմ և եր-
թամ շուկայից ուտելիք բերեմ: Գնացի: Նոր էի վերադարձել
թամ շուկայից ուտելիք բերեմ: Գնացի: Նոր էի վերադարձել
ուտելիքով, լուր բերեն, թէ Գալաւան երկու հոգու հետ միա-
ուտելիքով, մէկ հարուածով մին բաղնիք է գնում: Շտապով գուրս թռայ և մէկ հարուածով
մին բաղնիք է գնում: Շտապով գուրս թռայ և մէկ հարուածով
կայից յետոյ, անպիտան բոգուսլաւսկին ուղում էր Գալաւայի սպանութիւնը քո վրայ ձգել:

«Դրանից յետոյ, ևս անմիջապէս եկայ տուն: Սպաները
թուղթ էին խաղում: Նստեցի նրանց մօտ և սկսեցի գիտել խաղը:
«Դէպէին ականատեսներ լուր էին տուել սատիկանութեան:
Մէկ էլ սատիկանութիւնը շրջապատեց մեր տունը, թէ առաջակ
Դրոն մարդ է սպանել, ուր է»: Սպայ Սաշան պատասխանից, թէ
Դրոն ամբողջ ժամանակ ինձ հետ էր և հետեւաբար, չէր կարող
Դրոն ամբողջ ժամանակ ինձ հարուած տուեց և ինձ ձեռբակա-
մարդ սպանել: Բայց սստիկանութիւնը չտեց և ինձ ձեռբակա-

լելով աարին սստիկանութիւն հարցաքննութեան: Պահանջում
էին, որ խստավանեմ, թէ ևս եմ սպանել Գալաւային: Մեր-
ժեցի: Այն ժամանակ աարին վիրաւոր Գալաւային մօտ: «Անտա-
ւըւած, քեզ ինչ եմ արել, որ ինձ զարկիր», բացականչեց թըշ-
ւաւականը: Ես նորից մերժեցի: Յոյց տուին Գալաւայի հետ
եղողներին, բայց սրանք չճանաչեցին կամ չճանաչել ձեւացան:
Ապա՝ ինձ աարին բանա: Լուսաբացին գտաւածնը սատկեց:

«Յաջորդ օրը՝ կրկին քննութիւն: Երեւանից եկել էին քննիչը
և ճանդարմական ռումիսուրը, որսնք խիստ հարցաքննութիւն ա-
րին: Զեռբակալել էին նսկե Գէորգանին և ուրիշներին: Բո-
գուսլաւսկին ամէն կերպ աշխատում էր աղդել քննիչների վրայ,
որ յանցաւոր հանեն: Ես նորից կտրուկ կերպով յայտարարեցի,
թէ ամբողջ ժամանակ տանն եմ եզել սպայ Սաշայի մօտ և ոչ մէկ
կտպ չունեմ Գալաւայի սպանութեան հետ: Սաշան և միւս
սպաներն էլ երգումով վկայեցին, թէ ամբողջ ժամանակ իրենց
մօտ եմ գտնուել: Բոգուսլաւսկու ճնշումի վրայ էլ սպաները
անդրդուելի միացին: Ժողովուրդն էլ համակրական ցոյց տարա-
մեր օգտին:

«Երկու օր բանառում պահեցին, վերջը ինձ աղատ ձգեցին:
Վերջը Գէորգանին և միւսներին էլ բաց թողին գրաւականով:

«Ահա քեզ իմ առաջին զէնք բանեցնելու պատմութիւնը:
Ո՞նց ևս հաւանում», յաւզուած վկայացրեց Դրոն...»

«Հա՞յ, այս էլ աւելցնեմ. 1916ի վերջերը, ևս Թիֆլիսում
հանդիպեցի Սաշային: Այժմ գնդապետ էր, վիրաւորուած եկել
էր սպամածակատից բժշկուելու:

— Յիշո՞ւմ ևս, հարցրեց նա, անպիտան բոգուսլաւսկին
ուղում էր Գալաւայի սպանութիւնը քո վրայ ձգել:

— Գիտե՞ս ինչ, Սաշա, պատասխանեցի ևս, բոգուսլաւսկին
իրաւունք ուներ, իսկապէս որ Գալաւային ևս էի սպանել:

Գնդապետ Սաշա Զաբոլոտկօն շշմուծ նայում է Դրոյի
երեսին...»



«ՄԵՐ ԱՆՎԵԼԵՐ ԴՐՈՒՆ»

Միքայել Վարանդեան, իր «Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն» արժեաւոր գործի Ա. հատորին մեջ հետեւեալ ձեւով կը ներկայացնէ նակաժիձեի ահաբեկումը.

Մայիս 11ին, ցերեկուան ժամը 3ի առեն, երբ գեներալ — նահանգագետը՝ Նակաշիձէ՝ կառքով կը ուսնար քաղաքի կեդրունական պաղտուայով, ուումք մը նետուեցաւ անոր վրայ և աւասր գզրդիւնի մէջ Նակաշիձէի ջախջախուած ու այլանդակուած դիակը փոռւեցաւ գետին...

Հակառակ իր բոլոր զգուշութիւններուն, Ոճրագործը չկըրդաւ խուսափիլ հայոց Նեմեղիդայի արդար վրէժխնդրութենէն:

Դժուար է նկարագրել այն խուճապային սարսափը, որ յառաջացաւ Բագուի մէջ: Պայթումի ակսարանն արդէն սոսկում կ'ազդէր: Նակաշիձիէ արիւնաթաթախ գիտկն ընկած էր պաղտայի մէջտեղը, կառքը երկու կառը եղած էր. թուրք կառապանն աւ ծանրապէս վիրաւորուած էր և շուտով մեռաւ: Ռումբի հարուածէն մահացան նաև Նակաշիձէի ծառան ու մի թուրք մրգագաճառ, որ բազմած էր այն անկիւնին մէջ, ուրկէ Դաշնակցութեան խորհրդաւոր ձեռքը նետեր էր դժոխային գործիքը:

Սարսափը այնքան մեծ էր բազմամարդ փողոցին մէջ, որ ամբողջ տառը բռուի ոչ ոք կը համարձակէր մօտենալ սպաննը բաւած իշխանաւորին:

Ահաբեկիչը, Մեր ԱննՄԱՆ ԴՐՈՒՆ, վայրկենաբար անհետուցաւ, և ոստիկանութեան բոլոր ձիգերը՝ դանելու թանկագին որսը՝ ապարդիւն անցան:

Սփոփանքի և ուրախութեան հառաջանք մը թուառ սպառուհայութեան կուրծքէն: Հարուածը իր զօրաւոր արձագանգն աւեցաւ մինչեւ հեռաւոր Պետերբուրգ, ուրկէ թագաւոր՝ կայսրը իր հանդիսաւոր ու ջերմ ցաւակցութիւնը կը յդէր սպանուածի

ընտանիքին և կը նշանակէր անոր յաջորդը, — դարձեալ հայատեաց վրացի իշխան մը՝ զօրավար Ամիլախվարի: Բազուի թրքութիւնը և ուսւ ու այլ սեւ-հարիւրեակները կազմակերպեցին հսկայ, չտեսնուած յուզարկաւորութիւն, հարիւր հազար մարդ, մեծ մասամբ թուրքեր, շրջապատեցին դիակառաքը...

Ոմբային հարուածի տպաւորութիւնը ահազին էր ողջ կովկասի մէջ: Դաշնակցութեան հմայքը, որ մեծ էր արդէն եկեղեցական գոյքերու համար մզուած կոիւներէն և ահաբեկումներէն ի վեր, խիստ բարձրացաւ կովկասեան ժողովուրդներու տչքին: Հայ մարտական կազմակերպութեան անունը կը հոլովէին բոլոր շրջաններում, ոմանք հիսցումով ու պատկառանքով (ուսւ յեղափախականներ և ազատականներ), ուրիշներ՝ ատելութեամբ ու տումներու կրծացով (սեւ - հարիւրեակեաններ), վըրացի թթու ազգայնականներ և մանաւանդ թաթար հայատեաց պարագլուխներ): Իր շեշտակի հարուածով և յարսւցած գլորդիւնով, այդ ահաբեկումը, զոր կարելի է համեմատել Պետէի և մեծ իշխան Սերգէյի գէմ կատարուած մեծաշառաչ ահաբեկումներուն հետ, պիտի մնայ Հ. Յ. Դաշնակցութեան փառաւոր գործերէն մէկը:

ՄԻՔ. ՎԱՐԱՆԴԵԱՆ



ՄԻ ՀԱՏՈՒԱԾ ՅՈՒԵՐԻՑ

Ե. - ԱՐԱՋԻՆ ՀԱՆԴՐՈՒՄ ԴՈՒՍԱՆԻ ՅԵՏ

Հակառակ Բագուի կենտրոնական կոմիտէի կարգադրութեան, ընկերական մի պարտականութիւն կատարելու նպատակով, 1905 թ., յունիսի վերջերին և Երևանից վերադարձ Բագու:

թ. յունիսի վերջներս առ օրուառողջ է լուսակացնելու համար այդ ժամանակ Մարտիրոսը՝ և Ալեքսանդրապոլցի Մուկուչը (ՄԿՕ) բանտարկուած էին Նակաշիձեի առաջին մահավորձի պատճառով, որ անցել էր անյաջազպ: Պէտք է աեղի ունենար զինաւորական դատ, և բանտարկուած ընկերները համոզուած էին, որ գասարանը մահուան պատիժ կամ յաւիտենական աստվանակիր աշխատանքի վճիռ պիտի տայ: Մարտիրոսը նամակ էր գրել Երևան և խնդրում էր, որ ամէն կերպ տշխատենք, բանակց Երևան առ խնդրում էր, որ ամէն կերպ տշխատենք, գասարանը առ ամէն կերպ տշխատենք, փախցնել իրենց, իսկ եթէ այդ չյացողութի, ուռմբ նետել և զինուոր պահակների հետ միասին իրենց էլ սպանել:

Այս նամակի մասին լուրջ խորհրդակցութիւն ուսուցուք
Խէօն, Մկրտիչն ու ևս, և Յագու մեկնելս էլ տեղի ունեցաւ
նրանց գիտութեամբ և համաձայնութեամբ։ Երեքիս կարծիքն
էլ այն էր, որ Մարտիրոսի երկրորդ ցանկութիւնը պէտք էր
կատարել այն գէպքաւմ միայն, երբ գասարանը մահուան պատ-
ճի վճիռ տար, իսկ տաժանակիր աշխատանքի պարագային կա-
տար գիմելու սպանութեան։

^{*)} Մարտիրոս Չարու խչեան, յայտնի դաւանակցական մարտիկ, սպառուց պարագա-
կան կոփեներում:

— Ինչպէս կարելի է այս պայմաններում գործ անել, եթք
ամէն մարդ իր ուղածն է առաջ տանում ու հրահանգներին չի
ենթարկւում, գանգտաւում էր նա: Խոկ մեր սիրելի Պապաշան
կըտամբում էր. —

— Այս տղայ, գուշ հօ գիր չե՞ս, ինչո՞ւ եկար, չե՞ս որ սա-
տիկանները շան նման փնտռում են քեզ:

Ես ի՞նչ կարող էի պատասխանել աւագ ընկերների դառն խօսքերին, մանաւանդ որ որոշուած էր երեքիս վճիռը ոչ ոքի չյայտնել: Ինձ մնում էր միայն քրանել ու սպասել, թէ երբ պիտի օձիքս ազատ թողնին:

Հակառակ կրտծո նախատինքներին ու յանդիմանութեան, այնուամենայնիւ ես զձուցի չհեռանալ Բագռուից, մինչև չկատարեմ մեր երեքի որոշումը: Եւ նոյն իսկ բանա էլ գնացի այցելու Մարտիրոսին և Մուկուչին: Մարտիրոսի քոյրը՝ Սաթենիկը ինձ ներկայացնելով եղածը տեղ՝ արտօնութիւն էր ստացել, և նրա հետ միասին գնացինք բանա, ուր բաւական երկար խօսեցի Մարտիրոսի հետ, բացարեցի, որ յուսահատուելու կարիք չկայ, յայտնեցի մեր երեքիս վճիռը և հաղորդեցի ինչշոյի և Մկրտիչի ջերմ բարեւները: Առանձնապէս պնդեցի, որ եթէ դատարանը ասժանակիր աշխատանքի վճիռ արձակէ, չպէտք է ռումբի օգնութեան դիմել, նուխ սրովհետեւ տաժանակիր աշխատանքի տեղից շատ շատերն են փախել և ազատուել, ուրիմն, իրենք էլ կարստ են ազատուել: Երկրորդ՝ ռուսական յեղափոխական շարժումը օրի վրայ ծաւալում ու լոյն չափերի էր հասնում. ո՞վ գիտէ, թէ վաղը ինչ էր լինելու. արդեօք այսօրուայ հալածուղներն ու բանասարկուազները իշխանութեան տէր չպիտի դառնալին:

Այս այցելութիւնը և Երեւանից բերուած որոշումն ու խորհուրդները շատ լաւ ազգեցութիւն արին բանապետակաների վը-քայ: Դրանից յետոյ էլ ևս գեռ մի - երկու չափաթ մնացի Բագրում, երբ Երեւանից ստացուեց մի անակնկալ հեռագիր: Այդ առթիւ մատայ Պապաշայի մօտ բացարութիւն ուղելու: Հեռագիրը կրում էր Տէր - Յավհաննիսկան ստորագրութիւնը, որ ինձ անծանօթ էր: Պապաշան մի լաւ յանդիմանելուց յետոյ, որ գեռ չեմ հեռացել Բագրուից, յայտնեց, թէ հեռագրողը Նիկոլ - Գուշամանն է, որ հրահանգում է անմիջապէս մեկնել Երեւան: Պապաշան իր կողմից էլ պնդեց, որ օր տուած ճանապարհ ընկնեմ:

Ես յաջորդ օրն իսկ մեկնեցի և Երեւան հասնելուս պէտ

շտապեցի ներկայանաւ Նիկոլին, որի ժամանակաւոր շտապը գտնուում էր Յարսկայա փողոցի վրայ, երբորդ թէ չորրորդ տունը Աստաֆեանից հաշուած:

Նիկոլը դեռ չէր եկել: Թէև Բագրում ևս նրան մի քանի անգամ տեսել էի, բայց հետք ծանօթ չէի: Դուրս եկայ, որ մի քիչ զբոնեմ, երբ հեռուից տեսայ նրա դալը: Անմիջապէս վերադարձայ և կամաց - կամաց գնում էի յետեւից: Շտապը մտնեւիս նա նկատեց, որ և բարձրանում եմ սանդուխքներով: Դարձաւ ու հարցրեց.

— Ի՞նչ կայ. ո՞ւմ էք ուզում:

— Զեր հեռագրի համաձայն եկել եմ, պատասխանեցի ևս:

— Բագրի՞ց:

— Այո՛:

Նա ներս մտաւ իր սենեկը, ուր հրան սպասում էին Գաւուս Ալոյեանը և պահեստապետ Հայկոն: Նրանց հետ կէս ժամի չափ խօսելուց յետոյ ինձ էլ կանչեց ներս: Ես մտայ, բարեւեցի և կանդ առի սեղանի մօտ: Նիկոլը քաղաքավարութեամբ պատասխանեց բարեւիս: Բարեւեց նաև Գաւուսուն և դառնալով Դումանին՝ ասաց.

— Դէ՞հ, Նիկոլ, ևս գնացի. Էլ ինձ գործ չկայ տյստեղ: Ու դուրս եկաւ: Նիկոլը հրաւիրեց ինձ նստելու և անմիջապէս անցաւ գործի:

— Բո Բագրու գնալու մասին, ասաց, Խէջօն մանրամասն զեկուցել է ինձ: Կուսակցութիւնը պէտք եղած դէպքում գիտէ իր անելիքը: — Եւ սկսեց հարցաքննել: — Ի՞նչ կրթութիւն ում իր անելիքը, զինուորական ծառայութեան մէջ եղե՞լ եմ և այլն:

Ես, եթէ չեմ սխալում, քսան մէկ տարեկան էի: Յայտնեցի, թէ՝ աւարտել եմ Երեւանի Գիմնազիայի չորրորդ դասարանը, թէ՝ եղել եմ Ախուլգինսկի գնդի զինեվարժական բաժնում և Բագրուի հայ - թբքական ընդհարումների պատճառով կիսատ ձգել ու փախել եմ Բագրու:

— Ծխո՞ւմ էք, ընդհատեց նա, մի ծխախոտ առաջարկեց և ակնարկելով՝ Նակաշիձէի ահաբեկումը՝ շարունակեց. Կուսակցութիւնը քո ձեռքով մի մեծ գործ է կատարել, այդ չի նշանացում, թէ դու հակառակ նրա կենարոնական կոմիտէի հրահանգի կում, թէ դու հակառակ նրա կենարոնական կոմիտէի հրահանգի քո իսկ ապահովութեան և իրեն յայտնի այլ պատճառներից է: Հայ ազատուգրական պայքարը շտապ մեծ է,

քեալագէողութեան վայրկեաններն անխուսափելիօրէն դեռ կը դան, հարկաւոր է տնտեսել ուժերը և սպասել յարմար ժամանակի: Մանաւանդ դու, որ թէ Գիմնազիայում ես սովորել, թէ զինուորական Դպրոցում, շատ լաւ պէտք է հասկնաս, թէ ինչ բան է կարգապահութիւնը: Դու մնում ես իմ տրամադրութեան տակ. գնա՞յ, պէտք եղած դէպքում կը կանչեմ:

Ես լուս, գլուխս կախ լսում էի: Մերթ առաք քրաինք էր գալիս վրաս, մերթ պաղ: Ոյժ չունէի տառարկելու կամ արգարանալու: Նրա պարզ, բայց կարուկ և ազգու խօսքերը միւսում էին գլխումս այլեւս երբեք չմտնացուելու համար:

Ասպէս տեղի ունեցաւ իմ առաջին հանդիպումը Նիկոլ - Դումանի հետ:

Երկու թէ երեք օր անցած նա ինձ նորից կանչեց մօտը: Կարգագրուած էր, որ իէջօն Սարգիս Օտաբաշեանի և Վահան Փափազեանի (Կոմսի) հետ գնայ Նախիջեւանի շրջանը, ինկ ինձ ո՞ւր պիտի ուղարկէր, դեռ չգիտէի: Նա ապրում էր Սարգիս Օհանջանեանի տանը. այնտեղ էլ ընդունեց ինձ, բայց այս անգամ շատ աւելի սիրալիր ու մտերմական վերաբերումով: Նախամենայն լրջութեամբ և մանրամասնորէն հարց ու փորձ արաւ, թէ ինչպէս ահարեկեցի Նակաշիձէին, ապա յայտարարեց.

— Դու պիտի անցնես Ղըրիսրուլաղ: Քեզի կը տամ տասը զինուոր: Ծրջանը ապահով վայրերից մէկն է, մեծ վտանգ չկայ. միակ վտանգը քրարքեաման¹ է, որ կարող է յարձակում գործել հայ գիւղերի վրայ, արգելք լինել գաշտացին աշխատանքներին և քշել գիւղացիների անասունները: Քեզ վրայ գնում եմ նաև մի ուրիշ պարտականութիւն, որ աւելի կարեւոր է. տեղ հասնելուդ պէս իսկոյն պիտի կազմակերպես տեղական մարտական խմբեր, նախապատռութիւն տալով ուսւս զինուորական ծառայութեան մէջ գանուածներին: Կը կազմես նաև մէկ կամ երկու բացարիկ խումբ 15ական հոգուց և կը ցուցակագրես շըրջանի բոլոր զէնքերն ու փամփուշները:

Այսպէս խօսելով՝ սեղանի արկդից հանեց ուսւսական շտաբի հրատարակած զինուորական քարտէզը և փուելով սեղանի վրայ ցոյց տուեց շրջանի բոլոր հայկական ու թրքական գիւղերը, հանգամանորէն բացատրեց նրանցից իւրաքանչիւրի զինուորական նշանակութիւնը. յատկապէս երկարօրէն կանգ առաւ քոչւոր թուրքերի բոնած վայրերի վրայ՝ սկսած Բէղաքլուի բար-

* Քոչւոր բուլքեր

ձունքներից մինչեւ Սելիմի լեռնանցքը: Եւ ի վերջոյ, կարգողեց:

— Վաղը կ'անցնես շտաբ, կը ստանաս լիոզօրտդիրդ և Ղըրիբուլազի մի քաջ տէրտէրի հետ կը մեկնիս շրջանդ: Տէրտէրը մի քանի օր է ինչ այսահղ է և իրենց շրջանի համար խմբագետ է խնդրում:

Այս բոլորը ինձ համար շշմեցնող անակնկալ էր: Ես այլ բան էի մտածում և բնաւ տրամադրիր չէի Ղըրիբուլազի պէս մի խողաղ, մարտական տեսակէտից անհետաքըքիր շրջան գընալ: Եւ անհամարձակ դիմեցի նիկուին.

— Պարոն Նիկու, մի խնդիր ունիմ:

Նա գլուխը արագօրէն թեքից իմ կողմը: Ես շտրունակեցի:

— Դուք ինձ խումբ էք տալիս և ամբողջ շրջանի զեկավար էք նշանակում: այդ իմ ուժերից վեր է: Ես չեմ կարող տրդարացնել ձեր յոյսերը. խնդրում իմ ինձ չուղարկէք Ղըրիբուլազ, այլ պահէք ձեզ մօտ և օգտագործէք քաղաքական կոիւների համար:

Նա, դէմքը մի քիչ խոժոռած, սուր հայեացք նետեց վրաս և տրամասնեց:

— Վաղը առաւօտեան ժամը 9ին եկէք շտաբ: պատրաստ և դէք մեկնելու Ղըրիբուլազ: — և ոսկրոս ձեռքը պարզելով ինձ աւելացրեց՝ ազատ էք, կարող էք գնալ:

Ինձ ոչինչ չէր մնում, բայց եթէ համակերպուել: Հետեւ եալ օրը առաւօտեան ժամը 9ին ես տրդէն շտաբումն էի: Նիկուը յանձնեց ինձ լիազօրտդիրը, կարգութիր ստանալ խմբի ծախսերի համար հարկաւոր դրամը և փոմփուշաներ ու հրացաններ:

— Իսկ աղաները կը ստանաս Մկրտիչից: Երբ ամէն բան պատրաստ լինի, մեկնելուց առաջ, երեկոյեան դէմ անցիր այստեղ ինձ մօտ: Այսօր ամէն բան պատրաստ պէտք է լինի, որ պէսզի վաղը ձանապարհուէք:

Դումտնի նշանակած ժամին երեկոյեան մասյ շտաբ: Նա մանրամասնօրէն պարզեց ինձ յանձնուած շրջանին և խմբին վերաբերուող բոլոր կարեւոր խնդիրները և առանձնապէս կանգառաւ մարտիկների զինավարժութեան, կարգապահութեան և դէպի աեղական բնակչութիւնը ցոյց տրուելիք վերաբերմունքի վրայ:

— Խստիւ հրահանգում եմ, ընդգծեց նա, ո՛չ մի դէպում չմասնակցել աեղական դատական և այլ կաշգի գործիրին, որ

քանով որ նրանք կապուած չեն ձեր զինուորների և զինուորական պարտականութիւնների հետ: Իմ ցանկութիւնն է, որ ամէն կերպ խոյս տաք ակղական ժողովրդին նեղութիւն պատճառելուց և դժգոհութիւնների առիթ ստեղծելուց, մանաւանդմատակարարման հարցերով: Այսահղ, ուր ժողովրդը ձեզ յօժար կամքով պարէն չի արամագրի, գնեցէք: այդ նպատակով ձեզ գումար կը տրամադրեմ:

Այդ ժամանակ ամէն աեղ, սովորաբար, ժողովաւրդն էր կերպիրում մարտական խմբերին, բայց ես շատ լաւ ըմբռնում էի Դումտնի մատհոգութիւնը. մի կողմից նու չէր ուզում որեւէ նեղութիւն պատճառել ժողովրդին, միւս կողմից, իր կարգադրութիւններով ուզում էր իրեն ենթակայ անհատներին ներշնչել Դաշնակցութեան զինաբերող և ժողովրդասէր ոգին: Նա շատ մեծ կարեւորութիւն էր տալիս մարտիկների բարոյական մաքրութեան և գաղափարական անձնազոհութեան: Նա պահանջում էր, որ Դաշնակցականը իր կետնքով ու գործով օրինակ լինի ժողովրդին:

Բոլոր անհրաժեշտ հրահանգները տալուց յետոյ, նա կարգողեց, որ մի ամիս վերջը վերադառնամ և զեկուցում տամ կատարած աշխատանքներին և ինձ վատահուած շրջանի մասին:

Ղըրիբուլազում մենք շատ քիչ ընդհարումներ ունեցանք: Մի ամսից յետոյ ևս վերադառնամ երեւան՝ Դումտնին զեկուցում տալու համար: Ինձանից առաջ արդէն եկել էր վերեւ յիշուած քահանան՝ Տէր - Զաքարը, և մանրամասն պատմել շրջանի և իմ աշխատանքի մասին: Տէր - Զաքարը ասել էր Նիկոլին՝

— Նիկու, առաջ ես խնդրում էի որ նրան մեր շրջանը չուղարկես: իբրև շատ ջահելի: հիմա խնդրում եմ, որ պահես մեզ մօտ և ուրիշ շրջան չփախագրես:

Երբ Տէր - Զաքարից յետոյ ևս հասայ երեւան և մանրամասն զեկուցում տուի Նիկոլին, առանձնապէս մատնանշելով դաշտային հսկիչ պահակների կատարած արդիւնաւէտ դէրը՝ նա գոհ՝ հաւանութիւն տուեց իմ այս գործին և տաց:

— Տեսո՞ք, այդ կէտը իմ հրահանգների մէջ չկար, մի բան էլ գեռ աւել էք արել: Դուք նորից կ'երթաք Ղըրիբուլազ, ուր կը մնաք մինչեւ որ քոչոր թուրքերը վայր իջնեն լեռներից: Ապա ես ձեզ կը կանչեմ և մի ուրիշ աւելի հետաքրքիր աշխատանք կը տամ:

Եւ առաջին անգամ ձաշի հրաւիրեց իր մօտ:

Բ. - ԼԵՌՆԱՅՑԻՆ ՆԱԽԻԶԵՒԱՆՈՒՄ

(ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՍ ՔԵՌԻԻՆ ՀԵՏ)

Մեր ճամբորդութիւնը Դարալագեազից Նախիջեւանի լեռնային շրջանը անցաւ առանց դէպքի: Եթք տեղ հասանք, իբրև կեդրոնավայրի ընտրեցինք նորս գիւղը:

Մեր եկած շրջանի վիճակը բաւական տխուր էր. բացառութեամբ Գիւղու և Գիւղերի գիւղերի, միւս բոլոր հայկական գիւղերը թալանուած էին թուրքերի ձեռքով: Դուներն ու պատուհաններն անգամ տարուած էին: Բախտաւորութիւն էր գոնէ, որ թուրքերի յարձակման ժամանակ արտերը գեռ հասած չէին: Թալանից յետոյ, հայ գիւղացիները վերադարձել էին իրենց կիսաւեր ու բոլորովին ամայացած տները և հաւաքել արտերի բերքը: Այդ պատճառով, հացի կողմից ապահովուած էին, բայց տաւար կամ ուրիշ բան՝ ոչինչ չունէին:

Նորսի մեծ տներից մէկը — անգուռ և անպատուհան — դարձաւ մեր բանակառեղին և շաբարը: Իրապէս տուն էլ չէր, այլ մի ընդարձակ չարգախ, ուր անց էինք կացնում մեր ժամանակը: Սեղանի տեղ գործ էինք ածում մի կոտրած փէշխուն, անկողնի փոխարէն՝ խոտ ու մեր եափնջիները: Գիւղացիք իրենք էլ անկողին չունէին և մեղ պէս, խոտի կամ յարդի վրայ էին պառկում: Մեր ամենօրեայ կերակուրը հացն էր: Մեզ համար էր ասուած՝ «զհաց մեր հանապազօր, տուր մեղ այսօր»: Ամէն օր հաց: Երբեմն էլ ունենում էինք դաւուրմա և ուրիշ ոչինչ: Այդ պատճառով չափազանց մեծ էր լինում զինուարների ուրախութիւնը, եթք որեւէ գործով ուղարկում էին Գիւղոր կամ Գիւմրի, ուր կար ամէն բան: Տղաները նոյն իսկ հերթ էին պահում և երբ պէտք էր լինում ուղարկել, ասում էին.

— Պ. Դրօ՛, երէկ այսինչները գնացին, այսօր էլ մեր հերթըն է, մենք գնանք:

Եւ ուղղակի երեխաների պէս ուրախանում էին, եթք իրենց էի նշանակում գնալու:

Պէտք է ասեմ այսուղ, որ աղաները, ընդհանուր առմամբ, անկեղծ յարգանքով էին վերաբերում ինձ: Խլաթցի Գալօն միայն արհամարհանքով էր ընդունել իմ խմբագետ նշանակուե-

լը և իր վերաբերումը արաւայացաւ էր հետեւեալ պատմութեամբ Մոկաց իշխանների կունքից:

— Տղա՛ք, մըր մոկաց իշխաններ կը ժողվին ու էրկար ֆիքըր կ'ընեն, թէ իրենց հարկ որո՞ւ ձեռքով զրկնն վանայ վաւլին, որ քրդեր չթալլին ձամքին: Շատ ֆիքըր կ'ընեն, քիչ ֆիքըր կ'ընեն ու կ'որոշեն վաղեր ժամկոչի աղուէսի*) վիզէն կապել որ տանէ, սաղսալամաթ տեղ հասցնէ: Հիմա մեր պարոն Դուման մեզ կապեր է իդա աղուէսի վիզ...

Աղուէսը ես էի,

Նորսում սկսեցինք զբաղուել շրջանի ինքնապաշտպանութեան գործով: Նոխ՝ կապ հաստատեցինք հայկական բոլոր գիւղերի միջեւ. ապա՝ վատնգուած վայրերում խմբագետներ նշանակուեցին, կազմուեցին տեղական ինքնապաշտպանութեան խմբեր: Կազմակերպուեց հետախուզութեան գործը, որպէսզի օրը օրին տեղեակ լինէինք թշնամու շարժումների մասին: Գիւղացիութիւնը մեծ վստահութեամբ ընդ առոջ էր գնում մեր բոլոր առաջարկներին և սիրով կատարում էր կարգադրութիւնները:

Մեր վրայ էր ընկած և շրջանի վարչական — դատաստանական գործը, որպէսիւեւ ուսւս պաշտօնէութիւնը վախից ամբողջապէս հեռացել էր: Թէև կուսակցութեան կենտրոնի կարգադրութեամբ երկրի գատական — վարչական խնդիրների լուծումը վերապահուած էր տեղական կոմիտէներին, բայց նրանց վճիռներից գգուները յաճախ մեղ էին գիմում, և մենք սահպուած էինք միջամտել:

Այս աշխատանքների ժամանակ մէկից աւելի անգամներ լուրեր հասան մեզ, թէ թուրքերը պատրաստում են յարձակւելու Կոռտ Մազրայի վրայ, ուր խմբագետ էի նշանակել կնեազին: Մի օր էլ իսկապէս տեղեկութիւն եկաւ, թէ Մազրան պաշտուած է թուրքերի կազմից: Մենք անմիջապէս ձի հեծանք ու շապեցինք օդնութեան:

Գիւղից հազիւ հազար քայլի չափ հեռացել էինք, երբ շընչասպաս մեր ետեւից հասաւ Նորսի վարչադը և լեղապատառ սկսեց աղաչել, որ վերադառնանք, որովհետեւ թուրքերն արդէն նորս էին մտել:

Նորսը մեզ համար խիստ կարեւոր ուղագիտական վայր էր. նա միակ հանգուցային կենտրոնն էր, որով կապւում էինք

*) Աղուէսը ժամկոչն էր:



ԳԺԱԾՈՐԻ ու ԳԻՒՅՐԻ և ՎԱՐԺԲԱՆԵՐԻ միջացալ՝ Զանգեզուրի հետ: Նորու ձեռքից տու՝ նշանակում էր կարուել Զանգեզուրից, այդ պատճառով շտափեցինք՝ ձիւրի գլուխները դարձնել յետ:

Նորսի գիւղացիները բաւական զէնք էին սատցել Հ. Յ.
Դաշնակցութիւնից, դիրքերը գրաւած դիմագրում էին թշնա-
մուն և թոյլ չէին տալիս, որ գիւղ մանէ. թուրքերի քանակը
շատ մեծ էր, բայց զինուած էին անկանոն զէնքերով, մեծ մա-
սամբ՝ այնալու, զափաղու և չախմախլու հրացաններով: Այն էլ
ինչպէս յետոյ պարզուեց, փոքր մասն էր զինուած. մեծ մասը
անդէն էր և եկել էր թալան տանելու:

Մենք ընդհակառակը, զինուած էինք շտա լու և անհամբեր կոռուի առիթ էինք փնտառաւմ, որպէսզի ցոյց տանք ժաղավարգին, թէ եկել ենք նրա կեանքն ու դայքը պաշտպանելու։ Վերջապէս, մենք ուղարկուած էինք Հ. Յ. Դաշնակցութեան կողմից, որ, մանաւանդ այդ օրերին, հայ ժաղավարգի դոյաւթեան միակ յենարանն էր հանդիսանուած։ մենք պէտք է արգարացնէինք մեր զբայ գրուած յոյսերը։ Մեզանից իւրաքանչիւրը համակուած էր զայրկեանի լրջութեան և պատասխանատութեան գիտակցութեամբ։

ՀԵՆԳ որ հասանք պաշապանուող գիւղացիներին, մենք էլ
մտանք դիրքերը և սկսեցինք հռանդով կռւսել: Մեր մոսիննե-
րի սրատից անաբեկուոծ՝ թրքական տհագին բազմութիւնը խո-
ճապի մատնուոծ՝ դիմեց փախուստի: Մեզ էլ այդ էր ոկտա-
շտապեցինք օգտուել առիթից և բուռն թափով ընկանք նահան-
ջող թշնամու յետեւից: Թուրքերն առանց կանգ առնելու փախ-
չուու էին. մենք հալածեցինք նրանց նորսից մօտ երեք կիւս-
մետր հեռու և համարեայ մտանք թրքական գիւղը:

թանի մօտենում էինք գիւղին, այնքան թուրքերի գիմուրութիւնը սաստկանում էր և կռիւը տւելի տաքանում։ Թուրքերը յանդուգին գարձան մանաւանդ այն ժամանակ, երբ նրանց օդնութեան հասաւ զաշտխ Թոփալ Մորթուղի խումբը։ Մենք զգուշութեան համար սկսեցինք յետ – յետ գնա՞ւ՝ դէպի նորս, թուրքերը, երեւի, կարծեցին, թէ փախչում ենք և Մորթուղի գլխաւորութեամբ գիմեցին աւելի յախտուն յարձակման։ Բերդակցի Օսկօն երկու ընկերներով թռան ձիերից և մտան քարերի տակ։ Ես աղաներով աւելի տուած էի. մենք էլ գարձանք ուրիշ բռնելով նրանց մօտ՝ մեր մոսինները ուղղեցինք թուր-

Քերին: Միաժամնակ լուր ուղարկեցինք գիւղ, որ կռւսված էր օգնութեան հասնին մեզ և շատպավ դրաւեն Նորսից Գիւմրի առնող ճանապարհի բարձունքը:

Դիրքային կործ կույից յետոյ, և հետա տոի 4-5 զինուր, որոնց թւում էր և Խլաթցի Գալօն, և մօս երկու հարկութ քայլ տռաջ անցնելով՝ նոր դիրք բռնեցինք թշնամու ճիշտ գիտացը: Կողքիս պառկած էր Գալօն և, հակառակ հրամանիս, անկանոն հրացանաձգութեամբ փամփուշտ էր փչացնում անհպատակ: Երկու փամփուշտաշար արգէն վերջացրել էր և անխնայ կրակում էր, այն ժամանակ, երբ ամէն մէկ փամփուշտ մեկ համար մէծ դին ունէր: Ես զայրացած աելիցս ցատկեցի — և մի երկու լու հարուած իջեցրի Գալոյի գլխին՝ պառայագ վրան.

- Տօ, յիմար, փամփուշտ փչացնելու ժամանակ ևս գտել.

Գալոնի խմ հարռւածներից սաստիկ կարել էր շրթունքը: Այդ գեղքը յեսոյ պատճենթիւն դարձաւ: Տղաները տեղի — անտեղի յիշում էին՝ Գալոյին ձևով առնելու համար:

Օգնական ուժերի հասնելուց յետոյ, մենք ընդհանուր գը-
րոհի դիմեցինք, թուրքերին դուրս հանեցինք իրենց դիրքե-
րից և քշեցինք մինչեւ իրենց դիւզբ:

Երբ յաղթական վերադարձանք Նորս, պարզուեց որ կռուի
թունդ վայրկեանին նորսեցիք գրաւել էին թուրքերի ամբողջ
տաւարը և քշել - բերել էին իրենց գիւղը: Գիւղացիներից ա-
մէն մէկը ջոկել - տարել էր իրեն պատկանող անասունները,
որ տառջ թալանել էին թուրքերը: Մհացածը բաժանուել էր
չքաւոր գիւղացիներին: Մի քանի հատ էլ յատկացուել էր մեզ
իբրեւ մասցւ և կթելու համար: Այնուհետեւ մեր տղաների կա-
թըն ու մածունը ապահովուած էր:

Յաջորդ առաւօտեան կանուխ մի նամակ եկաւ Առինջ գիւղը։ Գրում էին Խէչօն և Սարգիս Օդաբաշեանը։ յայտնում էին, թէ Քեռու հետ հասել են Առինջ, յոդնած են և խնդրում էին Պալ իրենց մօտ և տեղեկութիւններ տալ շրջանի ինքնապաշտպանութեան մասին։

Ես շատ ուրախացայ: Կարօտել էի Խէջոյին և շատ էի ուղում տեսնել նրան: Իմ բացակայութիւնը Նորսից վասնգաւոր չէր, որպէսիւհեւ թուրքերը կերած ծեծից յևոյ մի առ ժամա-

նակ չէին համարձակուրի յարձակուելու։ Անհրաժեշտ կարդագրութիւններն ազի և եղեք ընկերներով շատապեցի դէպի Առինջ։ Գիւղացիների մի ստուար բազմութիւն հաւաքուել էր ինձ բարի ճանապարհ մաղթելու և շատ ուրախ էր երեւում։ Շատերը մեկ օրհնում ու կատակում էին։

— Աստուած Դաշնակցութեան ոյժ և ձեզ էլ կեանք ու արե տայ, մի քիչ շունչ առանք ու ապահովուեցինք։ Տօ՛, գիւղից կովերի բռոցն էլ էր կտրուել։ Նորից մեր գիւղը շէնացաւ։

Իմ վարկը շատ բարձրացել էր նաեւ զինուորների աչքին։ Խլաթցի Գալօն այլեւս հեգնական առակներ չէր պատմում։ Բնդեհակառակը, նրա համար էլ ես արդէն կարգին խմբապետ էի։ Ինչ խօսք, որ իմ տրամադրութիւնն էլ շատ բարձր էր։

Առինջին մօտենալիս, ես հեռուից նկատեցի, որ Խէչօն դուրս էր եկել, կանգնած կտուրի վրայ՝ ինձ էր սպասում։ Երբ հասանք, նա ժպատակվ մօտեցաւ ինձ ու համբուրելով՝ ասաց։

— Հը՞, խաթաքեար քափուրօղի, դուման ես հանել շըրջանում։

Ու գրկած՝ տարաւ ներկայացրեց Քեռուն և Սարգիս Օդաբաշեանին, որոնք կանգնած էին մի երկյարկանի տան վերի պատշգամբում։

Սարգսին ես տեսել էի, իսկ Քեռուն հանդիպում էի առաջին անգամ։

Սարգիսը մտերմօրէն բռնեց ձեռքս և ասաց։

— Հը՞, մեր տղայ, առաջին մկրտութիւնդ յաջող է անցել, բեր մի համբուրեմ ճակատ։ Ու ցոյց տալով Քեռուն՝ շարունակցաց։ — Սա էլ մեր քեռին է՝ Անդրանիկի օդնականներէն։

Առջեւս կանգնած էր մի մարմնեղ, միջակից բարձր, ամռուր կազմուածքով, շիկադէմ, արծուաքիթ ու սրաչեայ մի մարդ։ Զեռք տուի ու սկսեցի հետաքրքրութեամբ զննել նրան։ Նա հարց ու փորձ արաւ։ Ապա սկսուեց ընդհանուր խօսակցութիւն, որի գլխաւոր նիւթը ինքնապաշտպանութեան գործն էր։

Մեր խօսակցութեան յաջորդեց ճաշը։ Գիւղացիք ոչխար էին մորթել և առատ հաց ու գինի մէջտեղ հանել։

Ճաշից յետոյ, երբ ձիերը նստած՝ պատրաստում էինք մեկնել Նորս, գիւղացիք մօտեցան մեղ մի բարձած ջորով և մէկը ասաց։

— Պարսն Խաչատուր, էս էլ չգինի է։ նուէր ենք տալիս Նորսի մեր զինուորներին։

Խէչօն զարժացած գիւղացիների այս առատաձեռնութիւնից՝ քմծիծաղով ասաց Սարգսին։

— Սարգիս, սրա տակը անպատճառ մի բան կայ, ահանհնքթէ ի՞նչ փորացաւ ունին։

Ու գեռ Խէչօն խօսքը չվերջացրած՝ գիւղացին աւելացրեց։

— Պ. Խաչատուր, քեզ էլ մի խնդիր ունենք. լսել ենք՝ մեր ֆէղայիները առաւր են բերել նորս. հիւանդի կաթ էլա չունենք մեր գիւղում։ խնդրում ենք՝ մեղ էլ բաժին հանէք։

Ես կանգնած էի Սարգսի կողքին։ Նա իրեն յատուկ բարձր քրքիչով սկսեց Քա՛հ-քահ ծիծաղել, իսկ Քեռին ժպտում էր մեղմօրէն։

Խէչօն էլ չդիմացաւ և աղմուկով հրհուց։

— Վա՛յ, ձեզ ի՞նչ տահմ. կովերի համար Խէչօն պ. Խաչատուր էլ գործարիք։ Լաւ, կը տեսնենք, մի բան կ'անենք։

Ու շարժուեցինք նորսի ուղղութեամբ՝ մեղ հետ տանելով նորիրուած գինին և Խէչօյի, Քեռուն և Սարգսի հետ եկած երկու զինուորներին։

Նորսում Խէչօն ու Սարգիսը մեղ յանձնեցին իրենց լեցուն խուրջինները։ Նրանք բերել էին ծիսախստ, շաքար, գեղորաշք և սրիշ անհրաժեշտ իրեր։ Մեզ առանձնապէս ուրախացրեց շաքարը, որի պակասից շատ էինք նեղուամ։ Ռուսաստանի ներսերը սկսուել էին գործադուլներ. երկաթուղին կանգ էր առել, մթերքների փոխադրութիւնն էլ համարեայ գաղաքել էր։ Մեզ մօտ, տուաջին հերթին, հրապարակից վերացել էր շաքարը։ Եէյը ստիպուած էինք խմել չամիչով։ Մենք գեռ Դարալազեազի և Զանդեղուրի հետ էլ կանոնաւոր կապ չէինք ստեղծել, որ մեր կարիքները այնտեղից հոգայինք. այնպէս որ Խէչօյի և Սարգսի խուրջինները ճիշտ ժամանակին էին հասնուամ։

Նորսում առաջին երեկոն նուիրեցինք տեղի ընկերական զրոյցի ու կատակների։ Յաջորդ օր տուաւածան սկսեցինք լըրջօրէն քննութեան առնել մեղ վերապահուած բոլոր խնդիրները։ Նախ քան խորհրդակցութիւնը Խէչօն ինձ մտերմօրէն առջարկեց։

— Երթանք՝ մի քիչ ման գանք։

Եւ երբ գուրս էինք եկել, շատ զգուշութեամբ, սկսեց խօսել Լեռնային Նախիջեւանի կարեւորութեան մասին ինքնապաշտպանութեան տեսակէտից. պէտք է միանանք Դարալազեազի և Զանդեղուրի հետ և այդ նպատակով հարկադրուած ենք մաք-

թել մի քանի թշնամի գիւղեր. այս լուրջ գործը գլուխ քերելու համար անհրաժեշտ է այս շրջանը յանձնել մի ուելի փորձուած ու և փոււած խմբապետի: Խէչօն յոյս էր յայտնուած, որ ևս ուրիշների նման խմբապետ մնալու ցանով բռնուած չեմ և իբրեւ կրթուած խմբապետ՝ կը հասկանամ իր տառծի կտրեւութիւնը:

Ճիշտն ասուած, Խէչոյի խօսելու ձեւը մի քիչ տարօրինակ թուաց ինձ. ի՞նչ գայլի շարական էր կարդուած գլխիս. որ պէտք է պէտք է. էլ ի՞նչ կարիք կայ երկար - բարակ խօսելու: Ես անմիջապէս կարեցի նրա խօսքը.

— Էլ ի՞նչ ես երկար ճառուած. ես շատ ուրախ իմ և միծ հաճոյքավ շրջանը կը յանձնեմ Քեռուն: Խէչօն անուշ աչքերով նոյեց երեսիս. գրկեց ինձ և ասաց.

— Այս, իմ բոլոր բալիկներն այսպէս են. կեցցե՛ս: Դումանին էլ այս մասին գրել են. նու էլ համաձայն է: Քեռին շատ փորձուած, խիզախ, ազնիւ խմբապետ է. ինչպէս ինձ ես սիրուած ու յարգուած, այնպէս էլ նրան վերաբերուիր:

Ես կրկին ու կրկին հաւասարիցը, թէ ուրախութեամբ կը յանձնեմ Քեռուն շրջանի հրամանատարութիւնը: Երբ առւն վերադարձնք, Խէչօն հանդիսաւոր կերպով յայտարարեց Սարգսին.

— Ամէն ի՞նչ կարգադրուած է:

— Արգէն ուրիշ կերպ էլ չէր կարսղ լինել. ես Դրոյին ճանաչուած եմ, պատասխանեց Սարգիսը:

Մեր այս խօսակցութեան ժամանակ գոմից դուրս էին բերել իմ ձին: Քեռին հիացած գիտուած էր նրան, ժպիտը գէմքին: Խէչօն հարցրեց.

— Քեռի ջան, ս՞ոնց ձի է:

— Լո՛ւ մալ է, պատասխանեց Քեռին:

— Քեռի՛, քեզ գէշքէշ, վրայ բերի ես:

— Տիրոջը բունբարէք ըլլայ:

Քիչ յետոյ, ես անցայ տղաների մօս և յայտարարեցի, թէ այսունեան մեր ընդհանուր խմբապետը Քեռին է: Տղաները անտրտուած լսեցին յայտարարութիւնս, բացի Խլաթցի Գալոյից և Կոփեցի Սարոյից:

— Մենք մըր խմբապետն զա՞ն ենք, յորի՞ ուրիշ խմբապետ կուտան մըզի, — գանգաւաւուած էին նրանք:

Ես բարկացայ նրանց վրայ, պահանջեցի որ լսեն և ենթարկուին եղած կարգադրութեան: Ապա գնացի Քեռու մօս և

անձամբ յայտնեցի ուրախութիւնս նրա ընդհանուր հրամանատար նշանակուելու առթիւ:

Քեռին ժամանեց լսեց ինձ և ասաց.

— Միասին կը վարենք գործը. դուն ալ կը մնաս քո խումբը կը վարես:

Ես, սակայն, առարկեցի և պնդեցի, թէ պէտք է լինիմ նրա հրամանատարութիւնն առկ:

Ու այնունեան մի մմբողջ առրի մինք մնացինք միասին կեռնային նախիջեւանուած ու Զանդեզուրում և վարեցինք բազմաթիւ կախներ, որոնցից երեքի վրայ պիտի կանգ առնեմ՝ ցոյց առլու համար, գէթ մասամբ, Քեռիի խոշոր անհատականութիւնը, զարմանալի յանդգնութիւնը, անսահման քաջութիւնը և մանաւանդ զեկավարի հմտութիւնը:

Գ. ~ ՍԻՍԵԱՆ ԳԻՒՂԻ ԿՐԻՒԾ

Մեր թագա գիւղ համելու յաջորդ առաւատ ես ընդհանուր ժաղով էի նշանակել եկեղեցաւմ. պատասխանուել էի ձառ ասելու: Երբ քահանան եկեղեցական արարտութիւնը վերջացրեց, չեմ յիշուած սկսել էի ձառու թէ ոչ, յանկարծ, զուրսը լսուեցին հրացանների գրաքացներ: Ինչպէս յետոյ պարզուեց, անպիտան գիշերապահները, մատծելով թէ գիւղուած զինուած ոյժ շատ կոյ և բան չի պատահի; առաւասուան գէմ գիրքերը թողել ու վերտագանների բանեց աները. թշնամին գրանից օգտուելով՝ յարձակուել էր գիւղի վրայ:

Հրացանների որսան հետեւց հաւար և իրարանցաւմ: Զանցան կազմերից ձայններ էին լսուած, թէ Սիսեանի թուրքերը արգէն գիւղն են մահել, թէ թշնամին սպառնուած է թալառի առլ գիւղը:

Այդ օրերին սովորութիւն էր եկեղեցի էլ զինուած զնալ. զինուած եկել էին ձառու և Բոնակոթից: Մեր ազաներից եկեղեցում էին գանւուած միայն Գարեգինն ու Մոկացի Խէչօն: Մենք պատրաստաւեցինք շատպավ գրաւելու գիրքերը: «Տղերք, հետեւեցէք ինձ», հրամացեցի ես բոնակոթցիներին, և ամէնքս

դուրս թռանք եկեղեցուց: Մեր միւս ազաներն էլ տկլուր ձիերը նստած, կայծակի արագութեամբ բարձրանում էին դէպի թռւրքերի բռնած դիրքերը: Մեզ միացաւ և տէրտէրի ազան՝ Յովհաննէսը իր մարդկանցով:

Մենք աճապարեցինք բռնել Սիսեանից դէպի թռազ գիւղ ամարածուալ բարձրանքները, որպէսզի արգելք լինենք թշնամու ներխուժումին, սակայն դեռ տեղ չհասած տեսանք, որ թռւրքերն արդէն գրաւել էին այդ բարձրանքները: Վայրկեանը ճգնաժամային էր: Գիւղը իրական վասնգի տակ էր: Ամէն կողմից լսում էին անհանդիստ ազագակներ: Մոկացի Խէչօն ի զէ՞ն էր հրաւիրում ժողովուրդին և ինձ սիրտ տալու համար անվերջ կրկնում էր.

— Դերօ ջան, վալլահ ազեկներ յըմէն ելան դիրքեր:

Մեր տղաներից ոմանք նոյնիսկ ժամանակ չէին ունեցել սանձելու ձիերը, հեծել էին առանց թամբի ու նոխտաներով և այդպէս արշաւում էին թշնամու դէմ: Երբ նրանք մօտեցան թռւրքերի դիրքերին, յանկարծ, ձիերից մէկը զարնուեց: Բըռնակոթցիների իմ կողմած վզվոդր*) երկու շղթայ կողմած, զինւորական կարգով ու կանոնաւոր համազարկերով բարձրանում էր բլուրն ի վեր թռւրքերին դիրքերից քշելու նպաստակով: Ես ու հետիս մարտիկներն էլ դիրքեր գրաւեցինք ու սկսեցինք կռուել: Այդ վայրկեանին խմբապետ Բողդանը ձիով արագութեամբ մօտեցաւ մէկ և պատմեց, թէ թռւրքերը խոշոր ուժեր են կենարոնացրել մեր 6-7 ձիաւոր ազաների դէմ և աջ կողմից առաջանալով, սպանում են անցնել նրանց թիկունքը: Զիերից մէկ-երկուսը խփուել են, իսկ ազաներից լուր չունի թէ սպանելով ին թէ ողջ են: Պահանջւելով էր արագ օդիութիւն: Առանց ժամանակ կորցնելու, Բողդանի, Մոկացի Խէչօյի և աեղական մի քանի հրացանաւորների հետ ևս շատացեցի վասնգում հայդուկների օգնութեան:

Երբ տեղ հասանք, մեր աչքերին պարզուեց հետեւեալ պատկերը: Թռւրքերը իրինց գրաւած բլուրի աջ կողմի ձորակի մօտից հետզետէ առաջանալով՝ աշխատում էին անցնել մեր ազաների յետեւը: Մի քիչ եւս, և մերոնք պիտի կարուէին թիկունքից: Մենք անմիջականութեամբ էինք բռնած առաջանաւոր ազանը մէկ առաջանում էր մեր աշխատակի մէջ լքում առաջ չըրեկլու համար: Ուսաի, առանց երկար մատծելու, թաշում է ձին և քառասմբակ արշաւում դէպի մեր գիրքերը:

Խուճապով յետ քաշուել: Մենք երեք հոգով, տաքացած, առանց մեզ հուշիւ տալու թէ ինչ ենք տնում, անցանք առաջ: Մէկ էլ, յանկարծ այդ թոհ ու բոհի մէջ, մեր ականջին հասան ոռոմբերի պայթունի որսաներ: «Երեւի մեր ազաները խառնուել են թռւրքերին», մտածեցի ես ու մի բնազդակոն վախ համակեց ինձ: Երկու ոռոմբ էլ մեր կողմից Գարեգինը նետեց: Բայց թշնամին տեղի չէր տալիս և գնդակների տեղատարափով յուսանատօրէն դիմագրում էր մեր գրոհին. մենք էլ յամառօքէն առաջ էինք շարժում:

Իսկապէս, երկու կողմի համար էլ կռիւը օրհասական էր: Մենք նահանջի անդ չունինք. թռւրքերն էլ հասկանում էին, որ եթէ աեղի առն, ոչ միայն իրենց ամբողջ ձեռնարկը կը զիմէր, այլ և անձնապէս էլ կը վասնգուէին: Մի գերագոյն ճիգ եւս մեր կողմից, և մենք հասանք բլուրի գագաթը, դէմ առ դէմ մէկ վրայ արշաւող թրքական նոր ուժերի: Շապով ամբացանք, ու սկսուեց մի կատաղի գիրքային կռիւ: Մեզ թշնամուց բաժանող տարածութիւնը հազիւ 80 - 100 քայլ էր: Իմ ձախ կողմը կռուում էր Քիւրդ Խէչօն իր ընկերներով. աջ կողմս բռնակոթցի և աեղական ուժերն էին: Թշնամու գնդակների տարափը այնքան սաստիկ էր, որ գլուխ բռնձրացնել հնարաւոր չէր, և ես չէի իմանում, թէ ինչ դրութեան մէջ էին իմ աջի ու ձախի ուժերը: Իմ մօտի ազաներից Բողդանը վիրաւորաւեց ձեռքից: Մի թեթև վէրք էլ ես սատցայ աջ սաքիցս: Յետոյ պարզուեց, որ ես գուրս էի եկել թռւրք զաջախ կտանլարի խմբի դէմ, որ բաղկացած էր յայտնի կռուող տւազակներից:

Բողդանին ուղարկեցի գիւղ և պատուիրեցի, որ անմիջապէս մէկ օգնութեան գան 10 բռնակոթցիներ: Բողդանը գիւղ մտնելիս՝ հանգիպում է Քեռուն, որը իր խոստման համաձայն 10 ձիաւորներով օգնութեան էր եկել թազա գիւղ: Բողդանը նրան պատմում է մեր վիճակը, յայտնում է իր վիրաւորաւելը, աւելացնում է, թէ ես էլ իմ վիրաւորուած, և թէ շատապ օգնութիւն է հարկաւոր: Քեռին կարծում է թէ ես սպանուած եմ, և Բողդանը թագցնում է ազաների մէջ լքում առաջ չըրեկլու համար: Ուսաի, առանց երկար մատծելու, թաշում է ձին և քառասմբակ արշաւում դէպի մեր գիրքերը:

Ճգնաժամային վայրկեան էր մեզ համար: Մենք մնացել էինք չորս հոգիով և համարեայ շրջապատուելու վրայ էինք: Երբեւ վերջին գիրքոյն ճիգ, ես Մոկացի Խէչօյին էլ ուղար-

*) Տասնեակ

կեցի օգնուկան ուժեր կանչելու համար, բայց ոչ ոք չէր երեւում: Մեր փամփուշտն էլ վերջանալու վրայ էր: Թշնամին արդէն ցնծութեան մէջ էր և աւելի վասա՞ն ու յանդուգն կերպով էր կուռում: Մեր գիտների վրայով թուրքերը տէր պիտի գառնային թաղա գիւղին, ուղմագիտական ահակէտից այդ շատ կարեւոր վայրին:

Մէկ էլ - ի՞նչ ահանեմ: Գարեգինը իր քափ ու քրաինք գործած ձիւ վրայ, թշնամու գնդակների կարկաւափ ատկ, մեր գիրքերը հասաւ: Զին անմիջապէս խփուեց: Գարեգինը մի ակնթարթում դիրք մտաւ մեր կողքին:

Նոյն վայրկանին, կատաղի փոթորիկի պէս որարշաւ, հասաւ նաև թերին: Ես սարսափած զուացի:

- Քեռի, թուրքերը մօտ են, շուաւ իջիր ձիուց, կը խփուես:

Դեռ խօսքս չէի վերջացրել, երբ նրա ատկի ձին գնդականը գետին գլուրուեց: Անտլայլ, կարծես ոչինչ չէր պատահել, մարտին ու պարաբելում տարձանակը ձեռքին, Քեռին տառջ խոյցաւ թուրքերի վրայ: Տատանուելու ժամանակ չէր, մենք էլ հետեւեցինք նրան: Յետեւից օգնութեան հասան և բռնակոթցիք: Այժմ արդէն նեղուելու հերթը թշնամունն էր, մեր գիրքերի առջեւ գանուող բոլոր թուրքերը կասորուեցին: Ով կարողացաւ ազատուել՝ փախաւ: Մեր յաղթութիւնը եղաւ կատարել:

Երբ արդէն թուրքերը դիրքերից քշուած էին, վրայ հասան Ախլաթեան ու Պննուս գիւղերի ուժերը: Ինչ մեզքս պահեմ, ևս Քեռու հրահանգը չէի զործագրել և պննուոցիներին ու ախշթեանցիներին լուր չէի առւել, բայց նրանք հրացանների որոտը լսելով, ինքնարերաբար, շտապել էին հասնել օգնութեան:

Այս բոլոր ուժերը համախմբած ու շղթայ կազմած՝ մենք քշեցինք Միսեան թուրք գիւղի վրայ: Քեռին ձին հեծած անվերջ առուած՝ կանչելով՝ գնում էր շղթայի առջեւից: Ես հըրատանգել էր հիմքից այրել Միսեանը, որ ոչինչ չմնայ այդ թշնամու համար կարեւոր ուղմական նշանակութիւն ունեցող գիւղից: Մենք էլ Քեռու առուած-ներին առուած-ներով պատասխանելով՝ մտանք Միսեան և ինչ որ կարելի էր այրել ու ոչնչացնել՝ ոչնչացրինք, գիրքը ուղարկելու նոր գիրք ու փշուր արինք: Կոտարուեցին և շրջակայ գիւղերից եկած բաւական

մեծ թւով թուրքեր, որոնք հաւաքուել էին Միսեան՝ թազա հայ գիւղի թալունին մասնակցելու համար: Միսեանից մնացին միայն հրկիզուած աների կոյսեր...

Երբ Միսեանը արգէն գրաւուած էր, Քեռին նոր միայն ուշադրութիւն գործրեց իմ վիրաւորուած լինելու վրայ և պատուիրեց, որ անմիջապէս թողնիմ ու վիրազանամ թաղա գիւղ:

- Քեռի չան, վերքս թիթեւ է, քանի զու Միսեանունն ես, ևս չեմ հեռանայ մօտիցդ, առարկեցի ես:

Ու մենք միասին լրացրինք ապահերազմական գործոզութիւնը: Փառաւոր ճակատամարտ էինք չահել: Միսեանի այրուելը սարսափելի ապաւորութիւն գործեց շրջանի թրքութեան վրայ, որի ողնաշարը վերջնականապէս կոսորւում էր: Միսեանը, իր մեծութեամբ ու խաղացած ազգեցիկ գերավ, շրջանի թրքութեան սիրան էր:

Այս կուռում մենք ունեցանք երեք սպանաւած և 3-4 վիրաւորներ: Սպանուեցին նաև 4-5 ձիեր: Քեռու Զէյրանը ազատուեց չնորհիւ այն բանի, որ Բանակութեամբ Քեռին ինձ էր արամազրել: Քեռու տակ սպանուեց մի ուրիշ ձի:

Թազա գիւղում մեզ փառաւոր ընդունելութիւն ցոյց տուին և մեր յաղթութեան լուրը տարածուեց ամէն կողման բարձրացնելով հայ ժողովուրդի մարատկան արամազրութիւնը և միաժամանակ՝ մեր համբաւը:

Այս կուռում էր, որ հայութիների աչքին բարձրացաւ Գումանի զինուարական կազմակերպութեան ձեւը, որ այնքան հեղնանքի առարկայ էր եղել մինչեւ այդ:

Հետաքրքրական էր Խլոթցի Գալոյի գնահատութիւնը բանակոթցի զինուարների և անզական միւս ուժերի վարած կը-ուիների մասին: Այդ գնահատութեան մէջ խացուած է մեր հայգետների ընկանուր եղբակացութիւնը:

- Տօ՛, վալլահ, աղեկներ, իրեն յատուկ ոճով տառում էր գալօն, մեր պարսն Դուման էնզար անխելք պա՛նչի կարգագրի: Էնի էրեւան նոտուկ՝ իմացիր ի, թէ էսաելի զինուորներ իմալ պափ կուցցու: Տղեկնե՛ր, էսոնք մըզ պէս կոփէչեն ըներ: Մընք էրկու հոգի հօս, էրկու հոգի հօն գիրք կը բանենք, ու ֆիտայու գիւլէն վը՛մժժ կը թափի թշնամու գլխուն: Էսոնք թելի պէս կը շարուին: Էնոնց էն թելուոր չաւուշ լէ էն շան

գեղուազ բան մը կը բռնէ, յըմէն աղիկներ ֆը'րթ — ֆը'րթ — ֆը'րթ թւանքներ կը կրտկին...

Տղէ'ք ջոն, չկարծէք թէ ևս լէ ֆիդայու անուն ձզի. վալ-լամ'հ, ջաղցի առուի փէլ բռնած՝ էնոնց միշտ յառաջ, միշտ յառաջ կռւուցի... Մեր Դերօն լէ, «Գեղառերու»^{*)} գլուխ ելանք, ռուսավար կը բռնէր, զինուորներ լէ կրտկ կր թափէին վըր թշնամուն: Վալլամ'հ, թէ դուզն կ'ուզիք ըսիմ, էդա տեղական զինուորներ դումտն իսանած էին զիւղի մէջ ու դիրքերու քով...

(«ՎԵՄ», Բ. Տարի թիւ 3 եւ 6,
Դ. Տարի թիւ 2)

^{*)} Ժայռերու



ԴՐՈ

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ Բ. ԽՈՒՄԲԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ (1914)

ՆՈՒԻ ԻՐՈՒԻ Մ

1905 — 906 ամսաթիվները . . . Հայ - թաթարական կոխւներու արիւնուտ շրջաննը . . .

Երևաննեան լայնատարած նոսհանդի իքնապաշտպանութեան ընդհանուր հրամանատարը նիկոլ - Դումանն էր. մէկը մէր խոչշրաբոյն ռազմա - մարտական զեկավարներէն:

Անգութ էր նո ծայրայեղօրէն, անխնայ՝ թշնամիի նկատմամբ. հրամանները գաման՝ կ'արձակէր առանց գիծ մը շարժելու իր գէմքին վրայէն. այս բարբառոսներուն միայն ամրափով կարելի է խելքի ըերեւակ կ'ըսէր նոյ յաճախ. Խստօրէն արդիւթ էր ձեռք դպցնել կանանց և երեխաներուն. Բայց երբ դաւադրօրէն հայ մը սպաննեւէր, մէկի տեղ 3 - 5 թիւրք պիտի իշնային:

Ծանր ճգնաժամէր ունեցոն մասնաւսրապէս Դարբասղը, Բագուն, Հին - Նախիջևանը և Շարուրը. Զգալի էր պակասը փորձառու և կորովի զեկավարներու:

1906-ին սկիզբները, կոխւները զիրար անխնայ յոշտեւ աստիճաննին էին հոսած:

Նիկոլ - Դուման, լարուած մեքենայի մը հանգոյն, գիշեր ու ցերեկ հրամանատարական զեկին գլուխն էր. Ոչ մէկ անսխորժ կամ վասնգառ տեղեկաթիւն կամ սպառնական վիճակ չէր խախտեր անոր հանգարա, պաղարիւն շարժումները. միայն այդպիսի պարագաներուն, աեղէն կ'եւլէր, կը քաւէր անկիւնէ անկիւն և յանկարծ գիմացդ ցցուելսվ և ձեռքին բթամատն ու ցուցադրաբ միացուցած՝ հատու և որոշ իր հրամանները կուտար - ոչ մէկ առարկութիւն. պէտք էր անսատան կատարել:

Այդ օրերէն մէկուն էր, որ Զանգեզուրէն սուրհանդակը կը հաղորդէր իրեն թէ թուրքերը նեղի լծած էին, չեմ յիշեր, ո՞ր շրջանը. Մեր ուժերը բաւարար էին հոն, բայց կը պակսէին գործոն և կորովի զեկավարներ:

Դուման, իր սեղանին վրայ, ռազմական քարտէսին քով (ուրուն վրայ, կարմիր կապոյտ անհամար կէտեր ու գծեր էր գծած) ունէր տրամադրելի զեկավար ուժերու ցուցակը:

* * *

Ճիշտ այդ օրը, գաւառական քաղաքի մը մէջ - օգտուելով
իր արձակուրդի օրերէն - պիտի ամուսնանար երիտասարդ,

յանգուշն և Դումանի կողմէն սիրուած մարտական նոր դեկավարներէն մէկը*):

Դաւառական այդ քաղաքը մէծ խրախանքի մէջ էր. Խըմբապեւը տեղի յայտնի ընտանիքէն էր և սիրուած տեղի երիտասարդութենէն:

Պատկը պիտի կատարուեր իրիկունը. Եկեղեցին լուսաւորւած, տեղացիներ տօնական հագուստներով խոնուած էին եկեղեցին մուտքին մօտ:

Ահա՛ և վեստն եկեղեցի կը մանէ իր գինակից ընկերներով շրջապատաւած:

Կուգայ նաև հարսը հարսնեւութիւնը. Արարողութիւնը կը վերջանայ: Հարս ու վեստն գանգազ կը յառաջանան գէպի ելքը, այդ վայրկեանին մարդ մը արտգ քայլով կը մօտենայ վեստին և թուղթի կտոր մը կը պարզէ անոր:

Հեռագիր մըն էր (գրաւած պայմանական լեզուով). Նիկոլ - Դումանը կը հրամացէր՝ անմիջապէս մեկնիլ Զանգեզուր, «Քեզի կտրիք ունին» . . .

Խմբապես վեստն վայրկեան մը շշմած՝ կ'արձանանայ. շուրջինները իրար կ'անցնին, բայց շփոթութիւնը ակնթարթ մըն էր. խմբապես անվրդով և գանգազ կը շարունակէ իր երթը հարսին քովէն, բայց երբ առն կը հասնին և ընտանիքի հարազատները բոլորուած էին նորապատկներու շուրջը, նոր վեստն կը մօտենայ իր հօրը.

— Հայրիկ, հրաման է եկեր Դումանէն, պիտի երթամանմիջապէս . . . կիսո քեզի կը յանձնեմ, պիտի պահես ինչպէս քո զաւակը . . .

Հայրը, աւանդապահ, ծանրագոււխ իշխանաւոր մը՝ կը շըփոթուի, կտրծես չըմբռնելով իմաստը աղայի խօսքերուն, տպակը մըմիջէ.

— Ատաթ չէ՛, պալէս . . . մեղք է . . . վաղը կ'երթաս:

— Չէ՛, հայրիկ ջան, չի բլի, հրամանը հրաման է, կոխւ է . . . և դառնալով զենակից ընկերներուն.

— Դէ՛, տղերք ջան, ձիերը թումրէք:

Ապա արագ կը մօտենայ հօրը և մօրը, ջերմօրէն կը համբուրէ անոնց գողգոջ ձեռքերը, կը շոյէ հարսին գլուխը և դուրս կուգայ . . .

Պատկէն ուղիղ գէպի մահ կ'երթայ անխոռվ: Այսպէս էր սերունդը այն առեն:

ԿՈՄՍ, «Խոնարհ Հերոսներ», Ս. հայու

*) Այդ զեկավարը լինելու Դրոն էր:

Պ Պ Օ

ԿԱՄԱԼՈՐԱԿԱՆ Բ. ԽՈՒՄԲԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Երկարատեւ ջանքերէ և բանակցութիւններէ յևոյ, 1914ի Սեպտեմբերին Հայ Ազգային Բիւրոն թոյլաւութիւն ստուգաւ ձեռնարկելու չորս կամաւորական խումբերու կազմութեան: Այդ տշխատանքը լրացաւ 1914ի Հոկտեմբերին, այսինքն թուրք և ռուս պատերազմի սկզբնաւորութեան:

Չորս խումբերուն մէջ մարտիկներու թիւը 2500ի կը հասնէր: 600 հոդի ալ կը կազմէին պահեալ: Հրամանատարներ կարգուեցան առաջնորդնէ շատ մը կոխներու մէջ փորձուած և լայն ժողովրդականութիւն վայելող ազգային հերոսներ՝ Անդրանիկ, Դրօ, Համազասպ և Քեռի: Անդրանիկ կարգուեցաւ Ա. խումբի հրամանատար. Դրօ ստանձնեց Բ. խումբի հրամանատարութիւնը, Համազասպ՝ Գ. խումբի, իսկ Քեռի՝ Դ. խումբի:

Կամաւորական այս չորս խումբերը կցուեցան ռուսական տարբեր զօրամասերու և Հոկտեմբերու ու դաստիարակուեցան ամբողջ ռուս և թուրք ճակատի երկայնքին՝ օգտագործուելու համար մասնաւորաբար հետախուզական դործողութիւններու մէջ և իբրեւ յառաջապահներ:

Կամաւորական խումբերը 1914 նոյեմբերին արդէն իսկ իբրենց առաջին կոխները կը մղէին թշնամիին դէմ՝ ցուցաբերելով արտակարգ եռանդ ու քաջութիւն: Այսաել մենք պիտի ծանրանանք Դրոյի հրամանատարութեան առակ գտնուող Բ. կամաւորական խումբի շարժումներուն և այդ խումբին վիճակուած կոխներուն վրայ:

Կամաւորական Բ. խումբը մեկնելով Իգդիրէն, Բայսպեղի ռուսական Հոկտեմբերն հետ, կը սկսի յառաջանալ դէպի Վան: Խումբը բազմաթիւ կոխներ մղելով կը հասնի Թափառիզի վերելքին, ուր Դեկտեմբերի սկիզբին երկօրեայ դժուարին կոխները:

Կ'ունինայ, այդ կոխներ ընթացքին ծանրօրէն կը վիրաւորուի խումբի հրամանատարը՝ Դրօն ու կը փոխադրուի հիւանդանոց:

Այնուհետեւ կամաւորական Բ. խումբը կը փախադրուի գործացիէվի ջոկատը, որ կը գործէր Ալաշկերտի հովիտին մէջ. թէեւ ժամանակաւորապէս զրկուած իր քաջուրի հրամանատարէն, խումբը մինչեւ 1915 ի սկիզբը կը մասնակցի Կօթը կոխներու և Ալաշկերտի հայերու դէպի ռուսական սահման գաղթի պահուն, կը պաշտպանէ զանոնք թուրք և քիւրդ յարձակումներուն դէմ:

1915 ի Յունուարին, օգտագույն կովկասեան ճակատի անդորրութենէն, կամաւորական հանդիսատ առլու և խումբերու պակասները լրացնելու համար, Բ. Գ. և Դ. խումբերը կը տարւին Երեւանի նահանգը ու կարսի շրջանը, իսկ Ա. խումբը՝ Արագածոտնի Մարտնդ քաղաքը:

Կովկասեան ճակատի հրամանատարութիւնը գնահատելով կամաւորական խումբերու մինչ այդ տարած աշխատանքը, կը ձեռնարկէ երկու նոր խումբերու (Ե. և Զ.) կազմութեան:

1915 ի գարնան սկիզբին կամաւորական խումբերը, հանգըտացած ու իրենց կազմերը լրացուցած, կրկին կ'ուղարկուին ռազմաճակատ: Այդ օրերուն Վանի ապստամբ հայութիւնը, թուրքերէ պաշարուած, հերոսական ինքնապաշտպանութիւն մը կը մղէր: Վանի պաշարուած հայ ազգաբնակութեան օգնութեան հասնելու համար կամաւորական Բ. Գ. և Դ. խումբերը կը միացւին մէկ կազմի մէջ, որ կը կոչուի «Արարատեան ջոկատ» և ուրուն ընդհանուր հրամանատար կը կարգուի Խանասորի Վարդանը. Ճիւտորներու հրամանատար կը նշանակուի Դաշնակցական Խելչոն, իսկ ջոկատը կազմող երեք խումբերը կը պահնեն իբրենց անջատ հրամանատարութիւնները. ուստի Բ. խումբն ալ մաս կազմելով հանգերձ «Արարատեան ջոկատ»ին կը շարունակէ մնալ Դրոյի հրամանատարութեան տակ:

1915 ի Ապրիլին «Արարատեան ջոկատ»ը կը մեկնի Երեւանէն՝ արշաւելու համար դէպի Վան: Ջոկատը իբրեւ յառաջապահուած կոռուելով առաջ կը շարժի, իրար եսեւէ կը գրաւեն Բերկրին, Զանիկ գիւղը, Ալիւր գիւղը: Թուրք զօրքերը արագօրէն կը նահանջեն Ռստանի ուղղութեամբ ու Վանի ազատագրուած հայ ազգաբնակութիւնը կ'ողջագուրուի ազատարար կամաւորներուն հետ:

Վանի գրաւումէն յետոյ ստիպողական հարց կը դառնայ Շատախի ու Մոկսի հայ ապստամբ ազգաբնակութեան ազատա-

գրումը և այդ շրջաններու մաքրագործումը թուրքերէն ու քիւրդ հրասակախումբերէն։ Գործը կը վատանուի «Արարատեան ջոկատ»ի Բ. խումբին, որ Դրոյի հրամանատարութեան տակ, Մայիսի վերջերը, կը գրաւէ Շատախը, ազատագրելով հայ ապօստամբ աղքաբնակութիւնը։ Շատախի մէջ փոքրաթիւ ուժ մը ձգելով, Դրոյի կամաւորական խումբը կռուելով կը յառաջանայ դէպի Մոկս։ Կը գրաւուի Մոկսը։ Յունիսի սկիզբին թշնամին կը դիմէ հակայարձակումի։ Երեք օր տեւող ծանր կոիւներէ յետոյ թշնամիի հակայարձակումը կը չախչախուի և Մոկսի հայութիւնը կը փրկուի։

Իր այս առաքելութիւնը յաջող կերպով գլուխ հանելէ յետոյ, Դրոյի խումբը Յունիսի կէսերուն կը միանայ կրկին Գ. և Դ. խումբերուն։ Այդ միջոցին է, որ Դրոյի խումբի գումարատակներէն մէկը, Մեսրոպի գլխաւորութեամբ արշաւանք կը կատարէ դէպի Սպարկերա ու քիւրդերու ձեռքէն կ'ազատագրէ 4000 հայեր։

Այնուհետեւ «Արարատեան ջոկատ»ի երեք խումբերը, ինչպէս նաև Անդրանիկի Ա. խումբը, ոռուսական զօրքերու հետ մէկաեղ կ'անցնին յարձակողականի։ Երկու օրուայ ծանր ձակատամարներէ յետոյ կը գրաւուի Զեւանը։ Ետ մղելով Խալիլ Բէյի ուժերը, ոռու և հայ բանակը կը հասնի Մանազկերտ - Բաղէշ ճամբուն։ Շնորհաւորելով զօրքերը իրենց այս յաջողութեանց համար, զօրամասի հրամանատար զօր։ Տրուխինը մասնաւորապէս կը յիշատակէ Անդրանիկի և Դրոյի խմբերուն յաղթական յարձակումը թշնամիին ձախ թերին դէմ և Համազասպի խումբին յարձակողականը՝ խիստ գժուարին պայմաններու տակ։

Յուլիսի սկիզբին, ոռու և հայ զօրքերը Սորբի մօտ կ'ենթարկուին թրքական յարձակողականին, որը սակայն կը ձախողի շնորհիւ հայ կամաւորներու յամառ դիմադրութեան։ պարտուած թուրքերը կը նահանջեն։ այս կոիւներուն մէջ կը սպաննուի «Արարատեան ջոկատ»ի հրամանատարի օգնական և ձիւոր խումբի հրամանատար իեչոն։

Սակայն հակառակ կամաւորական խումբերու աջակցութեամբ ձեռք բերուած այս յաղթանակներուն, Մանազկերտի և Փրխուսի շրջաններուն մէջ ոռուս զօրքի կրած պարտութիւնները պատճառ կը դառնան, որ ոռու և թուրք ընդհանուր ձակատը վտանգը է։ Որուս հրամանատարութիւնը կուտայ նահանջի հրահանգ։ Կը նահանջեն նաև կամաւորական խումբերը։ Դրոն իր խում-

բով, իբրև յետսապահ ուժ, կը ստանձնէ Բերկրիի կիրճին պաշտպանութիւնը և կ'ապահովէ վանի, Մոկսի ու Շատախի հայ ժողովուրդի գաղթը դէպի Արարատեան դաշտ։

1915ի Օգոստոս, Մելպեմբեր և Հոկտեմբեր ամիսներուն կրկին կը վերակազմուին հայ կամաւորական խումբերը։ Կազմը առ նաեւ է։ խումբը՝ Խշխան Արզութեանի հրամանատարութեան տակ։ Կամաւորական խումբերը իրենց մասնակցութիւնը կը բերեն վանի վերագրաւածան և մասնաւորաբար անոր պաշտպանութեան գործին։

Անդրանիկի և Դրոյի խումբերը կը մասնակցին Ախլոթի, Մուշի և Բաղէշի գրաւման։ Մինչեւ 1916 Ապրիլի սկիզբը Բաղէշի հերոսական պաշտպանութեան մէջ մեծ դեր կը կատարեն Անդրանիկի, Դրոյի և Համազասպի խումբերը։

1916ին կամաւորական խումբերը կը լուծուին և անոնց փոխարէն կը կազմուին հրացանաձիգ գնդեր՝ իբրև ռուսական բանակի կանոնաւոր զօրամասեր։ Այս ձեւով կը վերջանայ կամաւորական շարժումը և կը փակուի Դրոյի հերոսական կառնքին մէկ երեսը։

ԾԱՆՈԹ. — Սոյն յօդուածին համար լայնօրէն օքտավործուած է զօր. Գաբրիէլ Ղորդանեանի «Հայերու Մանակցութիւնը Համաշխարհային Պատերազմին Կովկասեան ձականին Վրայ» յօդուածաւերը, «Հայրենիք» ամսագլր, 1927։





Ա. ՎՐԱՅԵԱՆ ԵՒ ԴՐՈ (1915 Փ., ԵՐԵՒԱՆ)

Ս. ՎՐԱՅԵԱՆ

ԴՐՈ՝ ՍԱՐԾԱՄԻՇԻ ՄԷՋ

Օրուայ հրատապ պահանջն էր՝ կանգնեցնել թշնամու յառաջխաղացումը։ Դրս համար, տուժին հերթին, պէտք էր ուժեղացնել ճակատի զօրամասերը օգնական ուժերով։ Սարըզամիշում պահեստի մասերը գրիթէ սպառուած էին. մնացածները ո՛չ մէկ վստահութիւն չէին ներշնչում։ Զօր. Արէշեանի գիմումները Ալեքսանդրապուլ Զօր. Նազարբէզեանին ո՛չ մի արդիւնք չէին տալիս։ Սկսեցինք ուղիղ հեռագրաթելով ոմբակոծել Հայոց Ազգային Խորհուրդը Թիֆլիսում։ Հետեւանքը եղու նոյնը։

Սարըզամիշում և, առհասարակ, ճակատի մերձաւոր թիկունքում սուր կարիք կար մաւարական զեկավար ուժերի, որոնցով լեցուն էր Թիֆլիսը։ Մեր գիմումները Հայոց Ազգային Խորհրդին այս գծով էլ արձագանք չէին գտնում։

Ուղմանակատից պահանջում էին կարուկ միջոցներով վերջ առաջ գտառալքութեան։ Բանակի կարգավահական ոգին կոստոները մնում էին անպատճիթ։ Անհրաժեշտ էր զինուորական գտարան կազմել պատճելու համար գտառաններին ու գասալիքներին։ Զօր. Արէշեանը յարմար ուժեր չէր գտնում գտառական կազմի համար և ի զուր բախում էր ընդհանուր հրամանատարութեան և Ազգ. Խորհրդի գոները։ Մեր թախանձադին խընդրանքներին էլ պատասխանելով՝ Թիֆլիսից յորդորում էին սեփական ուժերով բաւականանալ։ Փորձեցինք «սեփական ուժերով» կազմել զինուորական տական. բան գուրս չեկաւ։ Երկու վահանները վճռական կերպով մերժեցին զինուորական գտառարանի կազմի մէջ մտնել. նրանց խիզճը թոյլ չէր տալիս մահուան գտառավճիռ արձակել։ Երբ զեկավարներ իրաւունք էին համարում «խղճով» տուաջնորդուել, բնական էր, որ սառըագասներն

Էլ նոյնպէս տպաւինէին խղճին: Օրեր տեւող խօսակցութիւններից ու վէճերից յետոյ, կարելի չեղաւ զինուորական տահան կազմել, և դասաւիքները անպատիժ վխտում էին թիկունքում:

Մի օր էլ ըմբոստացաւ և մերժեց ճակատ երթալ Սարբամիշում գտնուող 101-րդ ձիւոր հարիւրեակը: Արէշեանի բոլոր ջանքերը կարգի բերելու անցան անօդուտ: Մարդիկ ուզում էին հետեւիլ դասաւիք՝ ռազմանկարից հեռացած ուսւ զօրամտաերին:

Զօր. Արէշեանը սիրաը բոնած՝ չարչարւում էր ցաւից ու անկարողութիւնից՝ չարչարելով նաև մեզ: Նսած մոռյլ՝ ելք էինք որոնում անել և անտանելի կացութիւնից: Եթէ այս դըրութիւնը շարունակուէր, կարձ ժամանակամիջոցում ռազմանկատը փաւ կը գար, և թշնամին անարգել կը յառաջանար դէպի կարս և Ալեքսանդրապուլ:

Մէկ էլ – հրա՛չք: Deus ex Machinal Վագներեան հերոսի պէս՝ ներս մտաւ Դրոն: Ո՞րտեղից որտեղ և ի՞նչ օրհասական վայրկեանին: Կարծես լոյս բերեց հետք: Նոյն իսկ Արէշեանի դէմքը պայծառացաւ: Դրոն բանակի կամիսար էր:

Բախաւոր ասաղի տակ ծնոււծ մարդիկ կան, սրսնց համար անկարելի բան գոյութիւն չունի: Հող առնեն՝ սոկի կը դառնայ: Յաջողութիւնը անբաժան ընկերն է նրանց:

Դրոն յայտնեց, թէ եկել է Երեւանից զէնք ու ռազմամթերք հայթայթելու Արարատեան Դաշտի զօրամտաերի համար: Կարսից ստացել և ուզարկել է որոշ քանակութեամբ փամփուշտ և հըրացաններ: Հիմա ուզում է Սարբամիշի պահեստներից զէնք ու փամփուշտ ուզարկել Երեւան:

Բոլոր պահեստները, իբրեւ պարետի, իմ տրամադրութեան տակ էին: Ես, ի հարկէ, առաջարկեցի ինչ որ հնարիւոր է փոխադրել: Արէշեանը անմիջապէս հաւանութիւն տուեց:

— Տարէք ինչ որ ուզում էք և ինչքան որ ուզում էք: Միայն թէ, սիրելի պարոն Դրօ, մնացք մի քանի օր օգնելու մեզ:

Դրոն շտապում էր վերադառնալ Երեւանի նահանգը, ուր արիւնանեղ քաղաքացիական կոիւներ էին աեղի ունենում և ուրինք շրջանի հրամանատար էր: Միայն ստիպուական հարկադրանքի տակ անձամբ եկել էր զէնք ու ռազմամթերք տանելու: Բայց Զօր. Արէշեանի և մեր խնդրանքը այնքան բռնուն էր, որ ստիպուած եղաւ տեղի տալ: Իր զիսուրականի բացարիկ բնազդով նա արագ կերպով ըմբռնել էր կացութեան անաւոր լրջութիւնը և անմիջական դարմանումի անհրաժեշտութիւնը:

Առաջին հերթին անհրաժեշտ էր վերջ տալ 101-րդ հարիւրեակի ըմբոստաւթեան, որ բարոյալքում ու կազմալուծում էր բանակը: Մարդիկ զինուում՝ նստել էին զօրանոցում և մերժում էին հնթարիսել հրամանատարութեան՝ ցուցական կերպով:

Իբրեւ բանակի կոմիսոր, Դրոն արագ կերպով պատրաստեց վատահելի զինուուրական ոյժ և հրամայեց, որ ըմբոստները դուրս գան զօրանոցից: Հարիւրեակը դուրս եկաւ և շարուեց հրացանները ձևոներին: Դրոն մի կարձ ճառով դիմեց նրանց հայրենասիրութեան՝ յորդորելով, որ մեկնին ռազմաճակատ հայրենիքի պաշտպանութեան համար: Աջ ու ձախից լսուեցին արտունջներ, մերժումի բացագանչութիւններ: Դրոն մի պահ լուս դիմեց և, յանկարձ, վագրի սստիւնով ասրճանակը ուղղուց հարիւրեակին ու գոչեց:

— Հանդա՛րա:

Անտեկնկալի եկած զինուուրները արագ կտարեցին հրամանը:

— Տասը քայլ առա՛ջ, պոսաց Դրոն:

Առանց վարանումի զինուուրները առաջ անցան առաջ քայլ:

— Հրացանները գնել գետին, հրամայեց Դրոն:

Մի պահ տաշանումից յետոյ, ամէնքը հրացանները վարդրին կեցած էր Դրոյի պատրաստած վաշտը՝ գլուդացիրներով զինուուած: Զինուուրները տեսնում էին այդ:

— Սուրերը գնել գետին, նորից հրամայեց Դրոն:

Զինուուրները սուրերն էլ դրին վար:

— Տասը քայլ յե՛տ, գոչեց Դրոն:

Հարիւրեակը մէկ մարդու պէս քաշուեց յետ, նախկին աեղը:

Դրոյի կարգադրութեամբ եկան, արագ կերպով հաւաքեցին ու տարին հրացաններն ու սուրերը: Ապա Դրոն պահանջեց, որ անմիջապէս յանձննեն ըմբոստաւթեան պարագլուխներին: Առանց գժուարութեան յանձնեցին երեք հոգի:

Հարիւրեակը զջում ու հնազանդութիւն յայտնեց: Լուրը կայծակի արագութեամբ հասաւ ռազմաճակատի զօրամտաերին և ցնցող տպաւորութիւն գործեց նրա վրայ:

Սյնունեաւ արագ կերպով կազմուեց պատերազմական ատեան, դատելու համար խռովարաների երեք պարտգլուխներին:

«ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ»

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ - ԲԱՇ - ԱԲԱՐԱՆ

Եւ Արարատեան գաշտի ժողովուրդը մի մարդու պէս ոտքի է կանգնում: Գործում են ամենքը: Ազգային Խորհուրդը վարում է բանակի լրացման, կազմակերպման ու մատակարարման գործը: Հրամանատարութիւնը կարգաւորում ու բարձրացնում է զօրքի մարտական ուժը: Զօր. Սիլիկեանը մի շարք հրամաններով ու կոչերով խրախոյս է ներշնչում զինուորներին ու համարակութեան: Ամենքը լծուում են թիկունքային աշխատանքի: Կանայք, օրիսրդներ՝ ուտելիք, ծխախոտ, վիրակապեր են պատրաստում: Հոգեւորականութիւնը խաչ ու քարոզով մանում է ժողովրդի ու զօրքի մէջ: Գարեգին եպ. Յովսէկեանը շրջում է մի մասից միւսը և իր հրաշունչ ճառերով բարձրացնում է զօրքի տարածագրութիւնը: Կրկնում էին Վարդանանց պատմական օրերը...

Երբ 1918 թ. Մայիս 21ին երկաթուղու ընթացքով շարժող թիւրքերը երեւացին Սարդարապատի մօա, այլեւս իրենց առջեւ գտան յաղթելու վճռականութեամբ տոգորուած հայ զինւորին:

Մատասր հաշուով, Զօր. Սիլիկեանի զօրքի քանակը, այդ օրերին, հաօնում էր 10000 հոգու: այս ուժերը բաժանուած էին երկու մասի: մի մասը Դրոյի հրամանատարութեան տակ Բաշ - Աբարանի ճակատում, միւսը՝ Զօր. Դանիէլ Բէգ Փիրումեանի հրամանատարութեան տակ Սարդարապատի գաշտում: Զօրքերի ընդհանուր հրամանատարն էր Զօր. Սիլիկեանը, սպայակոյտի պետ՝ գնդ. Վեքիլեանը, որ և գծել էր կոռուի ընդհանուր յատակագիծը:

Թիւրքերի կողմից, Սարդարապատի ճակատում, գործում էր 5րորդ գիլիկիան և բազմաթիւ անկանոն խմբեր, իսկ Բաշ - Աբարանի ուղղութեամբ՝ 3րորդ գիլիկիան:

Կոիւները սկսուեցին Սարդարապատում, ուր մեր զօրքերը գրաւել էին Ղարախանլու - Քեռքիալու - Զեյվաշ գիլիկի գիծը: Մայիս 21-22ին անդի ունեցան մասնակի ընդհարումներ. թշնամին որոնում էր հակառակորդի թոյլ տեղը՝ վճռական գրոհի գիմելու համար: Մայիս 23ին Զօր. Սիլիկեանը տուեց հակա-

յարձակման հրաման: Հայկական ուժերը նետուեցին առաջ: Բանկուեց կասաղի ճակատամարտների երկար մի շարք: Թիւրքերը ցոյց տուին յամառ գիմադրութիւն՝ անցնելով բազմաթիւ հակայարձակումների: Ամբողջ օր, առաւօտից մինչեւ երկոյաց, որոսում էին թնդանօթները, որոնց գոռոցը հասնում էր մինչեւ երեւան, ուր նոյնպէս տիրում էր անդոս ևու զեռ: Թիւրնքից սայլերով, էշերով, ձեռքերով ուզմամթերք էին հասցնում կոռուզներին, հաց, ծխախոտ, խմելու ջուր... Բազմաթիւ կամաւորներ՝ ծեր ու երիտասարդ՝ ուզմամթակատ էին շտափում: Ճակատի զինուորը չէր միայն - ամբողջ երկիրը մի մարդ, մի շունչ գարձած՝ կոռում էր մահացու թշնամու դէմ:

Մայիս 24ին թիւրքերը գիմնցին փախուստի: Մերսնք հաւածեցին սգեւորուած: Թշնամին յաւահատական գիմադրութիւն էր ցոյց տուիս և աշխատում գիրքեր գրաւել բայց մերսնց շեշտակի հարուածների ատկ շարունակեց փախուստը: Յաղթութիւնը մերն էր:

Մայիս 23ին, թշնամին, խոչսր ուժերով, յարձակման գիմեց և Բաշ - Աբարանի ճակատում: Սկսուեցին արբենահեղ կոիւներ: Դրոյին յաղթուեց կանգնեցնել նրանց յառաջխաղացումը՝ զգալի կորուս պատճառելով նրան:

Մատնալով օժանդակ ուժեր, թիւրքերը նորից անցան յարձակման՝ հանդիպելով մերսնց յամառ գիմադրութեան: Կոիւները տեւեցին մի քանի օր: Այսակ էլ մեր զօրքերը երեւան բերին արատակարդ տոկունութիւն ու քաղցութիւն: Դրոյի հմուտ զեկավարութեան տակ նրանք յետ չպատեցին թշնամու բոլոր գրոհները և Մայիս 28ին, մի խիզախ հակագրոհնով փախուստի մատնեցին թշնամուն: Այդ ճակատամարտում ներսուական մահով ընկու հայ լաւագոյն հայդաւեկներից մէկը՝ ձիւուր խմբի հրամանատար Զեմելեակը:

Մայիս 28ին տմբողջ ճակատի վրայ, թիւրքերը նահանջում էին անկարգ: Մեր սպայսկոյատի այդ օրուայ հաղորդագրութիւնը տառամ է այդ մասին. «Թիւրքերը երեք օրուայ կոիւներից յետոյ, ջարդուած են և նահանջում են հազձեպով: Նրանց զօրամասերը բաժնուած են երեք խմբերի: Առաջինը Ալոգեռզ կայարանից նահանջում է գէպի Անի կայարանը, երկրորդը՝ Ղըմզլու և երրորդը՝ Աղջա - Կոլու: Մեր զօրամասերը քայլ առքայլ հետապնդում են նրանց: Ոգեւորութիւնը աներեւակայելի է»:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄՔԸ

Որքան արի և յանդուգն՝ մարտական ճակատի վրայ, մեր սիրելի Դրոն նոյնքան արթուն էր և տոկուն՝ քաղաքական խընդիրներ հետապնդած տաեն:

Ռազմիկը հարկադրուեցաւ գիւտանագէտի գեր կտառքել գեռ Երեւանէն: Եւ աւելի քան երեսուն տարիէ ի վեր այդ ապերախտ աշխատանքին լծուած էր արտասահմանի մէջ, հակառակ իր խոռնուածքին:

Խորտպէս կ'ըմբռնէր, թէ տարրական պայման է ներկայ ըլլալ ամէն տեղ: Եթէ ոչ բարիքներ ապահովելու, գոնէ չարիքներ խափանելու համար:

Դաշնակցութիւնը ամէն բանէ առաջ գործի կուսակցութիւն է: Աւելմն, իր աչքն ու ականջը սուր պիտի պահէ որեւէ անցուդարձի հանդէպ:

Կը պատահին դէպքեր, որոնք սերտ կապ ունին Հայկական Դատին կամ ցիրուցան բազմութեանց ապահովութեան հետ:

Կը ներկայանան պարագաներ, ուր բարեկամն անդամ կը ըստ դաշտել, եթէ իր դիմաց չգանէ ընդդիմադիր և շարժուանուժ մը՝ իբրեւ արթուն պահակ:

Ոչ միայն Հայտասահնի, այլ և արտասահմանի մէջ շըջապատուած ենք այլազան գրացիներով, որոնք անընդհատ կը գործեն, նուածումներ կատարելու համար, ի վեպս անձարին և բացակային:

Երէկ՝ մարտական բազուկն էր, որ կարգի կը հասւիրէր զանոնք: Այսօր՝ քաղաքական միաքը պիտի գործէ, եւքեր գըտնելու համար:

Այս բոլոր պարագաներուն մէջ Դրոն էր Դաշնակցութեան ներկայացուցիչը, տեսակէտները կը պարզէր նոյն շառաչուն ուժգնութեամբ, ինչպէս գնդակ մը արձակած տաեն:

Ոչ միայն գրացիներուն, այլ և անոնց հովանաւորներուն հետ խօսելու եղանակ մը ունէր, որ մտածել կաւարք: Ամէն պարագայի մէջ, համարում կը ներշնչէր:

Երկրորդ Աշխարհամարտէն ետք, փոքրոգի մարդիկ, գոյնզգոյն դիմակաւորներ փորձեցին մուր քսել իր ճակատին, մերձեցման փորձի մը առթիւ, որ ամէն բանէ առաջ կը բխէր զուտ ազգային մտահոգութիւններէ:

Օրուան հարցն էր, — ի՞նչպէս ընել, որ Եւրոպայի հայ գաղութները և մեր անձար հայրենիքը ստքի տակ չերթան, նախայարձակին սանձակոտոր արշաւանքին առջեւ:

Դրօ իր ամբողջ անցեալն ու հմայքը գրած էր նժարին մէջ, այդ եղերական օրերուն: Ոչ թէ սնամէջ պատրանքներ սնուցանելով, այլ նախատեսելով բացակայութեան ահաւոր վանդակութիւնը:

Անշուշտ իրեն համար տառապանք էր այդ պատրականութիւնը:

Եւ ստկայն կատարեց նոյն պայծառամատութեամբ, ճակատաց ու վճռական: Միշտ յիշեցնելով արիստոր, թէ իր ներկայացացած ժողովուրդը ո'չ փորձանիւթ է, ո'չ ալ ամբոխ:

Վերջին տարիներու ընթացքին, երբ Արեւմուտքը չեշտակի գիրք բռնած էր յանուն ազատութեան և ինքնորշչման իրաւունքի, Դրօ նոյն հետեւղականութեամբ կը հետապնդէր հայկակոն պահանջները:

Գիտնալով հանդերձ, որ պարագաները բոլորովին անըլքաստ են մեզի համար, կարելին ըրաւ որպէսզի բարեկամն ու աշխարհակալները չխախտեն կատարուած նուածումները:

Ի ծնէ առաջնորդն էր, թէ՛ պատերազմի և թէ խաղաղութեան տաեն:

Իր մահով իսկապէս անփոխարինելի դէմք մըն է, որ Կ'անհետանայ հայկական հորիզոնէն:

«ՅԱՌԱՋ»



ԴՐՈ
(1929 ԱՊՐԻԼ, ՓԱՐԻԶ)

ՊՐՈ

Այս երեք նույրական գիրերու տակ պահուած կը մնան Հայ Ազատութեան Շարժման վերջին խանրինց տարիներու ալեծուփ պատմութեան անրիւ հեռոսական դրուագները, որոնցմէ իւրաքանչիւրը բաւական պիտի բլար մահկանացու մը անմահ դարձնելու եւ իւ անունը յաւես կենդանի պահելու Հայոց Պատմութեան արիւնու հշերուն վրայ:

Ո՞չ ո՞ւ իրմէ աւելի սիրուեցաւ իր ժողովուրդին կողմէ:

Որովհետեւ ոչ ո՞ւ իրմէ աւելին ըրաւ իր ժողովուրդին:

Երբ խաւարը իջներ Հայոց Աչխարհին վրայ, մեծ ռազմիկին կախարդիչ անունը, իբրեւ յոյսի ու հաւատքի հօմարիս ջահ մը, պայծառուեն կը փայլեր այդ խաւարին մէջ եւ Քաջին անունը կը ըրնդար այդ Աչխարհին մէջ, արեւելին արեւմուտք եւ հիւսիսեն հարաւ:

Դաշնակցական ծնա՞ւ եւ ոչ քէ դաշնակցական դարձաւ:

Ու հակառակ այս հանրայայս իրողութեան, իր հայրենիքի մէջ Քաջը հակառակորդ չունեցաւ:

Բովանդակ Հայոց Աչխարհին մէջ զինեցին ու սիրեցին, իր հմայիչ անձին ու անուան հանդեկ անկեղծ զնահատան ու զերմ գուրգուրան ունեցան անգամ Դաշնակցութեան ամենէն մոլի հակառակրները, որովհետեւ առասպելուուն էաց եր, անձայրուեն անձրւեր եր, գիւցազնուուն հայրենասէր ու ժողովրդապատ եր:

Հայ եր:

Մէկը այն հսկաներէն, որոնք իրենց դիւցազնական գործերակ Հայաչխարհը փառաւուրեցին եւ ժամանակն ու տարածութիւնը ծունկի բերին Հայոց Պատմութեան առջեւ:

Այսօր սուր է Հայաստան Աչխարհին մէջ:

Զոյզ Մասիսներէն մինչեւ Նեմրուր, Սիփան ու Գրգուռ, Արարատան գաւուն մինչեւ Աչխարհը Տարօնի, մինչեւ Արցախի լեռներն ու Վասպուրականի ձորերն ու դաշերը, Սարդարապատն մինչեւ Բայ Ապարան ու Ղարաբիլիսէ, Հայոց Աչխարհի բոլոր վայերը լեզու առած Քաջին մահը կը սպան:

Սակայն Դրոները աշխարհ չեն զար մեռնելու համար:

Ժողովուրդները հազուադիպուրէն Դրոներ աշխարհ կը բերեն՝ զանոնք ոչ քէ բաղելու, այլ յաւես կենդանի պահելու համար:

Կարմիր Վարդանները չմեռան:

Պիտի չմեռնի նաև ինք:

Իր ժեղ ու պայծառ անունը Հայոց Պատմութեան հջերեն պիտի անցնի սերունդի սերունդ՝ Ազատ, Անկախ ու Միացեալ Հայրենիքի մեծ երազը միւս վառ պահելով իր հոգիին մեջ:

Հոգեվարքի օրերուն զինք ժրապառող ընկերներուն դառնալով, իր ժողովուրդի մեծ զաւակը կ'ըսէ անոնց.

«Հպարտ պէտք է ըլլանք, որ անդամներն ենք Դաշնուկցութեան նման կազմակերպութեան մը»:

Սակայն հպարտ է նաև Գաճնակցութիւնը, որ իր ծոցեն Դրուեր ունաւ:

Ինչպէս որ հպարտ է հայ ժողովուրդի, որ Դրոյի նման զաւակներ ունեցաւ:

Այս նուիրական ժամին, երբ սուզ է Հայաժամարին մեջ, Քաջին հողանիւք մարմինը հողին յանձնելով, իսկ իր անմեռ անունը մեզի պահելով՝ բարձրածայն կը գոչենք.

— ՄԵՌԱՒԻ ԴՐՈՆ, ԲԱՅՑ ՅԱՒԵՐԾ ԿԵՅՅԵ ԴՐՈՆ:

• ՅՈՒՍԱԹԵՐ •



ԲԵԳԼԱՐ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Դ Ա Մ Բ Ա Ն Ո Կ Ա Ն

Կը գտնուինք երկու անյարիք և իրերամերժ երեւոյթներու առջև, — Դրօ և թաղում: Եւ պարտադրական հարցում մը կը խարազանէ մեր հոգիննը: միթէ հնարաւո՞ր է Դրոն թաղել, միթէ հողը կրնա՞յ պահել Դրոն, արդեօք կը գտնուի՞ գերեզման մը՝ այնքան հզօր, որ ընկճէ և նուածէ Դրոն:

Զենք հաւատար: Ինչ որ կը կատարուի այստեղ, մեր աչքերուն առջև, խարկանք է ու ցնորք:

Որովհետեւ Մահն ու Դրոն այստեղ, այս գերեզմանին առջև չէ, որ կը հանդիպին առաջին անդամ: Անծանօթներ չեն անոնք իրաբու: Անոնք քալած են միասին, կողք-կողքի, տասնումեակներ անընդհատ: Եւ ամէն մէկ քայլափոխին, դիւցազնատիպ Հսկան Մահուան տչքերուն մէջ նայած է շիտակ, անթարթ, անվախ:

Լի անյագ պաշտամունքով գէպի իր անպաշտպան հուրենիքը, Հսկան իր կուրծքը վահան դարձուց և իր սիրտը՝ դժու-

խային մեքենայ, կուրծքով ու որտով դէմ տուտւ բոլոր սսոխներուն Հայտասատն Աշխարհի ամէն մէկ թիզ հողին, իւրաքանչիւր սահմանին, բոլոր ճակատներուն վրայ:

Լի ճշմարիտ հօր մը անհուն զուրգուրանքով ու սիրով՝ գէպի իր լքուած ու անտէր ժողովուրդը, Հսկան իր միտքը դարձուց զրահ ու պատուհասող իր բազուկը՝ արդար վրէժի շանթ, և Խոդիրէն մինչեւ Բաքու, Պայտղիտէն մինչեւ Վան, Լոռիէն՝ Թիֆլիս, Դիլիջանէն՝ Արարատիան Գաշտ, Սուրմալուէն՝ Բաշ - Ապարան, հարուածեց անխնայ, հարուածեց ահեղ թափով, վշրեց ու փախցուց թշնամին, ողջ աշխարհին աւետելու, որ աէր ունի նաև ժողովուրդը:

Եւ այսպէս եղաւ իր հեքիաթային կեանքին բովանդակ տեւողութեան, պատանեկութենէն մինչեւ այն օրը, երբ նահանջի հրաման երբեք չարձակած իր շրթները փչեցին իրենց վերջին շունչը:

Այսպէս եղաւ ազնուազարմ Դրոն, մեր նորագոյն պատմութեան ճշմարիտ Հսկան:

Եւ այժմ մաքի ցնորք ու խարկանք է այն ենթադրութիւնը, թէ կը թաղենք Դրոն: Դրոն ո՛չ ոք կրնայ թաղել: Ան վաղուց արդէն անցած է բոլոր մահերէն, բոլոր թաղումներէն, բոլոր գերեզմաններէն:

Դրոն գրաւած է իր յաւերժական պատուանդանը հայ ժողովուրդի պատմութեան մէջ:

Սակայն մենք, իւրաքանչիւրս ինքն իր մէջ, կրնայ թաղել Դրոն, որովհետեւ մենք մահկանացու ենք և մեր հոգիները գերեզմանինն են տակաւին:

Պէտք է, որ Դրոն մեր հոգիներուն մէջ ապրի, անհրաժեշտ է, որ Դրոն մեր երիտասարդութեան հոգիներուն մէջ ապրի, որպէսզի կանգ չառնէ այն փառապստկ դիւցազնապատումը, որ կերտեց Դրոն, բայց որ անաւարտ է ատկաւին:

Ուխտենք, ուխտենք հանդիսաւորապէս ու հոգեւին, ուխտենք մեր սրտով, մեր գիտակցութեամբ ու մեր կամքով, որ անաւարտ պիտի չձգենք այն սրբազն գործը, որ կերտեց Դրոն:

Ուխտենք, որ օր մը պիտի հաւաքուինք բոլորս դարձեալ այստեղ, Դրոյին շուրջ, մեր մատներով և մեր բազուկներով պիտի քանդէնք այս հողակոյտը և ոչ թէ յուղարկաւորութեամբ, այլ յաղթանակի ցնծատնով տանելու համար Հսկան հոն, ուր իր անհանդարտ հոգին կը սաւառնի արդէն, հոն ուր մեր խընկելի Հայտասատն Աշխարհն է:

ԻՐ ՎԵՐԶԻՆ ՊԱՏԳԱՄԸ

ՀԱՏՈՒԱԾ ԴՐՈՅԻ ՓԱԿՄԱՆ ԽՕՍՔԻՆ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 65-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԾՈՆ
ԸՆԹԱՑՔԻՆ, 1955 ՆՈՅԵՄԲԵՐ 27-ԻՆ, «ԲԻՎՈԼԻ»Ի
ՄՐԱՀԻՆ ՄԷջ, Պէջ, Պէջը:

Ի՞նչ է Դաշնակցութեան ծրագիրը. ի՞նչ է նրա
փիլիսոփայութիւնը, ի՞նչ է նրա գլուխականութիւնը:

Դաշնակցութեան ծրագիրն է.- Հայ ժողովուրդի
ազատ լինելը հայ ժողովուրդի հայրենիքին մէջ:
Այս է Դաշնակցութեան ամբողջ ծրագիրը:

65 տարի առաջ այս նպատակով առաջ եկան
մեր պապեցը! 65 տարի արեան ըլքաներն անցնելով
այսօր աւելի քան կանգուն մնացել ենք մեր այս
գաղափարի վրայ: Եւ պէտք է լաւ իմանաք. ո՛չ մի
պայմաններում, ոչ մի դժուարին պայմաններում
չի խախտել եւ ո՛չ մեր հաւատը, ո՛չ մեր կամքը
յանուն մեր Հայրենիքի ստեղծագործութեան:

Եւ մենք այսօր յայտարարում ենք. քանի բռնու-
թեան տակ է մեր հայրենիքը՝ Հայաստանը, քանի
մեր հողերը բռնագրաւուած են, Հայ Յեղափոխական
Դաշնակցութիւնը ունի իր պայմանը եւ Դաշնակ-
ցութեան գաւակները, իբրև հայ ժողովուրդի հա-
րազատ զաւակներ, պիտի շարունակեն այդ պայ-
մանը. արիւնով կ'ըլնի, գրիչով կ'ըլնի, պայմանով
կ'ըլնի, մինչեւ Հայը հաւատուի իր բոյնին մէջ. Հայը
Հային կառավարի, ո՛չ Անզլիացին, ո՛չ Ամերիկա-
ցին, ո՛չ Ռուսը, ո՛չ Թուրքը. Հայը լինի իր երկրին
տէրը. Հայը լինի իր պատութեան տէրը:

Ժողովը փակուած է:

ԾԱԽՈՅ. — Վերի հատուածը՝ գրի առնուած ձախագիր ժապահնէնէ, բա-
ռացի և անփոփոխ վերարտադրութիւնն է ընկ. Դրոյի խօսքերուն:

ՀՀ Ազգային գրադարան



NL0294278

1819

ՏՊԱՐԱՆ «Ա.ՏԼՈՒ»

ԹԱՐԻԿԱՆԵՑԵՐՈՒ ՓՈՂՈՑ

— ՊԵՑՐՈՒՔ —